

## ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ Է ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ

Մարտ 13-ին Հայաստանի իրաւապահ մարմիններուն կողմէ բերման ենթարկուած է Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան ատենապետուհի Լուսինի Սարգսեանը:

Դատախազութեան շէնքէն ներս տեղի ունեցած հարցաքննութիւնը տեւած է մօտ 8 ժամ, որու ընթացքին Ընկերուհի Սարգսեանին ուղղուած հարցումները բացառապէս եղած են քաղաքական բնոյթի, կապուած՝ Կուսակցութեան գործունէութեան, կեցուածքներուն, սփիւռքի կառույցներու տեսակէտներուն, հանրահաւաքներու ընթացքին իր ունեցած ելոյթներուն եւայլն:

Լուսինի Սարգսեան բոլոր հարցերուն պատասխանած է յայտարարելով, թէ ինք եւ իր Կուսակցութիւնը գործած են ու պիտի շարունակեն գործել Հայաստանի Սահմանադրութեամբ վերապահուած իրաւունքներու շրջագիծէն ներս:

Վկայի կարգավիճակով տեղի ունեցած հարցաքննութեան ընթացքին Հնչակեան Կուսակցութեան ատենապետի կողքին եղած է իր դատապաշտպանը:

Նոյն օրը, ուշ երեկոյեան Ընկերուհի Սարգսեան ազատ արձակուած է, երկրէն չբացակայելու մասին թուղթ ստորագրելէ ետք:

## ՄԻՆՉ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԶԱՅՐՈՅԹԻՆ Ի ՏԵՄ՝ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԿԸ ԴՆԵՆ ՑՈՅՑԵՐՈՒ ԴԵՍ

Մարտ 1-ի ու անոր յաջորդած իրադարձութիւնները կը շարունակեն հանդիսանալ Հայաստանի ու արտասահմանի հայութեան գլխաւոր մտահոգութիւնն ու խօսակցութեան առարկան: Գործող իշխանութիւնները մտահոգ արտակարգ դրութեան աւարտին պատուող ժողովրդային գայրոյթի դրսեւորումներէն եւ քաջ գիտակցելով որ, ուշ թէ կանուխ հաշիւ պէտք է տան իրենց գործած ոճիրներուն համար, այժմ կը փորձեն առաւելագոյն ճնշել ժողովուրդի վրայ՝ սահմանափակելով երկրէն ներս քաղաքական ազատութիւնները եւ շարունակելով ընդդիմադիր գործիչներու դէմ հալածանքն ու ձերբակալութիւնները:

Արդարեւ՝ Ազգային ժողովը արտակարգ նիստի մը ընթացքին կատարեց օրէնսդրական փոփոխութիւններ, որոնք հնարաւորութիւն կու տան արգելելու զանգուածային միջոցառումները՝ հանրահաւաքները, երթերը եւ ցոյցերը:

«Ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքին մէջ կատարուած փոփոխութեան համաձայն, «զանգուածային միջոցառումները լիազօր մարմնի կողմից կարող են արգելուել, եթէ ըստ հաւաստի

տուեալների՝ դրանք ուղղուած են սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրօնական ատելութիւն բորբոքելուն, բռնութիւն կամ պատերազմ քարոզելուն, կամ կարող են յանգեցնել պետական անվտանգութեան, հանրային կարգի, հանրութեան առողջութեան եւ բարոյականութեան խաթարմանը, այլոց սահմանադրական իրաւունքների եւ ազատութիւնների ոտնահարմանը»:

Օրինագիծի այս եւ այլ հատուածները այնքան լայն շրջագիծ կ'ընդգրկէ, որ կարելիութիւն կ'ընձեռէ արգելելու որեւէ հանրահաւաք կամ ցոյց:

Բռնատիրութիւնը աւելի խորացնող այս օրինագիծին ի նպաստ քուէարկեցին Հանրապետական, Բարգաւաճ Հայաստան եւ Օրինաց երկիր կուսակցութեան պատգամաւորները, ինչպէս նաեւ իշխանութեան գիրկը վերադարձած Հ.Յ. Դաշնակցութիւնը: Օրինագիծի այս փոփոխութեան դէմ քուէարկեցին Ռաֆֆի Յվհաննէսեանի «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւորները:

Ընդդիմադրութեան կարծիքով՝ օրէնսդրական փոփոխութիւնները կոպտօրէն կը խախտեն մարդու իրաւունքները եւ ազատութիւնները:

Շաբ.ը էջ 4

## ԹԵՐԹԵՐԸ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ՝ ԱՌԱՅ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՄԻԱՅՆ

«Առաւօտ», «Հայկական ժամանակ», «Հայք», «Տարեգիր թերթերու խմբագիրները «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած են, որ լոյս պիտի տեսնեն միայն մէկ պարագայի՝ եթէ դադարի պետական գրաքննութիւնը:

Հայաստանի Ազգային Անվտանգութեան ծառայութեան մամուլի կենտրոնէն ռատիոկայանին յայտնած են որ, արտակարգ դրութեան վերացումէն յետոյ տպարաններու մէջ այլեւս գրաքննիչներ պիտի չգտնուին:

«Եթէ նորից շարունակուի գրաքննութիւնը, մենք չենք կարողանալ աշխատել, որքան էլ ցանկանանք», - ըսած է «Առաւօտ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արամ Աբրահամեան: «Դա ոչ թէ գործադուլ է, բողոքի ցոյց է կամ ինչ-որ քաղաքական ցոյց է. դա պարզապէս պրոֆեսիոնալ աշխատանքի նախապայման է եթէ դու տալիս ես միայն պաշտօնական տեսակէտը, իշխանութեան տեսակէտը, եւ չես տալիս հակառակ տեսակէտը, դու դադարում ես լրատուամիջոց լինելուց:

## ՇՆՈՐՀԻՒ ԱՍԵՐԻԿԱՅԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ ԿԸ ԿԱՐԾՐԱՑՆԵ ԻՐ ԴԻՐՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄԻՆ ԿԱՍՏԱՍԲ

Անցնող շաբթուայ ընթացքին Միացեալ Նահանգներու կառավարութիւնը սկսաւ աւելի բարձր մակարդակով ու աւելի խիստ բառերով քննադատել Հայաստանի իշխանութիւններու վարած հակա-ժողովրդավարական քաղաքականութիւնը եւ բռնամիջոցներու օգտագործումը: Այս բոլորի մէջ իրենց դերը ունեցան բազմահազար ամերիկահայեր, որոնք ցոյցերով, նամակներով եւ այլ միջոցներով իրենց տեսակէտները լսելի դարձուցին Ամերիկեան պետական շրջանակներու մօտ:

Հայաստանի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններէն ասդին, առաջին անգամ ըլլալով յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ Սպիտակ Տունը:

«Հայաստանի կառավարութիւնը պէտք է ապահովէ օրէնքի գերակայութիւնը, վերացնէ արտակարգ դրութիւնը եւ վերականգնէ մամուլի ազատութիւնը: Մենք կող կ'ընենք քաղաքական երկխօսութիւն սկսելու կառավարութեան եւ ընդդիմութեան միջեւ՝ իրավիճակը կարելի եղածին չափ արագ կարգաւորելու հա-

մար», - յայտարարեց Սպիտակ Տան խօսնակ Թոնի Ֆրանսո:

«Միացեալ Նահանգները կը դատապարտէ Մարտի 1-ի եւ 2-ի բռնութիւնները, որոնք հետեւանքով մարդիկ գոհուեցան, եւ ասոր հետեւած իշխանութեան գործողութիւնները, ներառեալ ընդդիմադիրներու ձերբակալումը, մամուլի ազատութեան, ինչպէս նաեւ հաւաքուելու իրաւունքի սահմանափակումը», - ըսուած էր Սպիտակ Տան յայտարարութեան մէջ:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Գոնտրիգա Ռայս, Գոնկրէսի առջեւ վկայութեան մը ընթացքին յայտարարեց որ, արտակարգ դրութիւնը պատճառ կը դառնայ, որպէսզի սառեցուին Հայաստանին տրուող որոշ ամերիկեան օգնութիւններ: Թէեւ նախարարը չի յստակացուց թէ, ինչի կ'ակնարկէ, սակայն ենթադրութիւնը այն է թէ, խօսքը կը վերաբերի «Հազարամեակի Մարտահրաւէր» ծրագրին, որու շրջագիծէն ներս Հայաստանի յատկացուած էր 235,6 միլիոն տոլար օժանդակութիւն:

Հազարամեակի Մարտահրա-

«Այդ փոփոխութիւնները խախտում են Եւրոպայի Խորհրդի վեներտիկեան Յանձնաժողովի հետ համաձայնեցուած գործող օրէնքի սկզբունքները եւ հնարաւորութիւն են տալիս կամայականօրէն արգելել ցանկացած զանգուածային միջոցառում: Դրանով կոպտօրէն խախտուած են ինչպէս Սահմանադրութեամբ, այնպէս էլ համապատասխան միջազգային կոնվենցիաներով ընդունուած, մարդու իրաւունքների եւ ազատութիւնների կարեւորագոյն նորմերը, ազատ հանրահաւաքների հիմնարար իրաւունքը», ըսուած է Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Համա-ժողովրդական Շարժումի կեդրոնին կողմէ՝ հրապարակուած յայտարարութեան մէջ:

«Չենք կասկածում, որ միջազգային հանրութիւնն ու նրա իրաւասու կառույցները համարժէք գնահատական կը տան ոչ միայն սեփական ժողովրդին խեղդելուն, այլ նաեւ համամարդկային արժէքները անարգելուն ուղղուած այս քայլին:

«Ոչ մի ժողովուրդ չի ընդունի նման անարգանք ու կապանքներ: Առաւել եւս՝ հայ ժողովուրդը, որը վերջին կէս տարուս համաժո-

ւէր» ծրագրի տնօրէն ձոն Տանի-լովիչ Ռոբերթ Քոչարեանի յղուած նամակի մը մէջ զգուշացուցած է թէ, Միացեալ Նահանգները կրնայ առկախել եւ կամ դադարեցնել Հայաստանի գիւղական շրջաններու զարգացման նպատակաւորողութեան ծրագրի իրագործումը:

Իր կարգին, Միացեալ Նահանգների փոխպետքարտուղարի օգնական Մեթիւ Պրայզա, որ նաեւ եւ ԱՀԿ Միւսիկի Խումբի համանախագահն է, «Ամերիկայի Չայն»-ին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները բնութագրեց իբրեւ «ողբերգութիւն», մէկ անգամ եւս կոչ ընելով Հայաստանի կառավարութեան՝ վերացնել արտակարգ դրութիւնը եւ վերականգնել մամուլի ազատութիւնը:

Այն հարցին, թէ արդեօք Հայաստանի մէջ տեղի ունեցածը «գոնաւոր յեղափոխութեան» փորձ էր, ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտը ըսած է. - «Այն, ինչ տեղի ունեցած է Հայաստանի մէջ,

Շաբ.ը էջ 4



ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԱԲԻՆԱ ՖՐԵՅԶԵՐ.

«ՀԱՐԱԲԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՔՉԵՐՆ ԵՆ ՀԱՐԱՏՈՒՄ, ԹԵ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՓՈԽԵԼ ՔՈՒԷԱՏՈՒՓԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ»

Հարաւային Կովկասում քչերն են հաւատում, թէ կարող են իշխանութիւն փոխել խաղաղ ճանապարհով՝ քուէատուփերի միջոցով: Այդ մասին գրում է Միջազգային ճգնաժամային խմբի Եւրոպայի ծրագրի տնօրէն Սաբինա Ֆրէյզերը «Ուոլ Սթրիթ Զոունըլ» պարբերականում այսօր հրատարակած յօդուածում:

Նրա կարծիքով, Հայաստանում նախագահական ընտրութիւններին յաջողած բռնութիւնները, «թէեւ առաջինն էին մայրաքաղաք Երեւանի փողոցներում, սակայն տեղաւորում են Հարաւային Կովկասում արդեն շատ ծանօթ վտանգաւոր սիւնայի շրջանակներում»:

«Յաճախ կրկնուող սցենարը հետեւեալն է. նախ՝ խախտումները եւ ընտրակեղծիքների մասին պնդումները ստուերում են ընտրութիւնները, այնուհետեւ՝ ընդդիմութիւնը բողոքի գանգուածային ցոյցեր է կազմակերպում, եւ վերջապէս՝ ուղարկում է ոստիկանութիւնը եւ անհամարժէք ուժ է գործադրում՝ ծեծելով ազատելով փողոցները ցուցարարներից», - գրում է Սաբինա Ֆրէյզերը եւ նկատում. - «Դա այնքան սովորական բան է դարձել Հայաստանում եւ Ատրպէյճանում, որ ընտրութիւններին մասնակցող կուսակցութիւնները այժմ կարծես նոյնքան ժամանակ են ծախսում հետընտրական պայքարին պատրաստուելու վրայ, որքան ծախսում են քուէների համար ընտրարշաւի վրայ: Նոյնը, ինչպէս երեւում է, սպասում է Վրաստանում Մայիսին անցկացուելիք խորհրդարանական ընտրութիւնների հետ կապ-



բաժինն ունի նաեւ միջազգային հանրութիւնը: Միջազգային հաստատութիւնները ներկայացնող դիտորդները, յատկապէս խորհրդարանականները սովորաբար հակուած են շատ արագ հաւանութիւն տալ ընտրութիւններին՝ առաջնորդուելով քաղաքական նպատակներով. աջակցել կառավարութեան թեկնածուին յանուն «տարածաշրջանային կայունութեան», կամ էլ պարզապէս նպատել լաւանձին դաշնակիցների՝ իշխանութեան մնալուն:

Ֆրէյզերը շատ աւելի վստահելի է համարում ԵԱՀԿ-ի Ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների գրասենակի դիտորդական առաքելութեան գնահատականները, որոնք հիմնուած են շաբաթներ կամ նոյնիսկ ամիսներ տեւած դիտարկումների վրայ եւ որոնք վերջնական տեսքով շատ աւելի ուշ են ներկայացւում:

Եւրամիութիւնը եւ Միացեալ Նահանգները պէտք է յստակ հասկացնեն, որ կեղծուած ընտրութիւնների հերթական շրջանը չի հանդուրժուելու

ուած, որտեղ Նոյեմբերին կառավարութեան յարձակումը խաղաղ ցուցարարների վրայ նախորդեց յունուարեան նախագահական ընտրութիւններին»:

Յօդուածագիրը նշում է, որ տարածաշրջանում «անչափ շատ ընտրութիւններ են ստուերում ձայների վատ կամ շատ հաշուարկով, ընդդիմադիր ակտիւստների անհաբեկմամբ, քուէատուփերի լցումամբ, բազմակի քուէարկութեամբ, կողմնակալ ընտրական յանձնաժողովներով, կառավարութեան թեկնածուի աջակցման համար պետական ռեսուրսների օգտագործմամբ եւ լրատուամիջոցների կողմից ընտրարշաւի աղաւաղուած լուսաբանմամբ»:

«Դա չէ այն յետխորհրդային իրականութիւնը, որի յոյսը ունէին շատերը: Խորհրդային Միութեան փլուզումից եւ Հարաւային Կովկասի հանրապետութիւնների անկախացումից յետոյ բոլորը խօսում էին Ժողովրդավարութեան նրանց անցման մասին», - շեշտում է Սաբինա Ֆրէյզերը:

Նա գտնում է, որ մեղքի իր

ԱՆՀԱԲԱՏԱԼԻ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԻՆՉՔԱՆ ՄԱՐԴ Է ՔՈՒԷԱՐԿԵԼ ՅՕԳՈՒՏ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ԱՄՆ-ի Գալիֆորնիայի համալսարանի փրոֆ. Կոնստանդին Բալաքիրեանը հրատարակել է Հայաստանում տեղի ունեցած նախագահական ընտրութիւններին վերաբերող մի յօդուած, որով մասեմատիկորէն ապացուցել է, որ Սերժ Սարգսեանը Փետրուարի 19ին հաւաքել է ոչ թէ 862 հազար ձայն, այլ դրա կէսից էլ պակաս:

Իսկ հաշուարկը հետեւեալն է: Հեղինակը նշում է, որ ՀՀ վիճակագրական ծառայութեան տուեալներով, հանրապետութիւնում բնակուած է 3 միլիոն 228 հազար 300 մարդ: Միաժամանակ, հեղինակը նշում է, որ այդ թիւը ուռճացուած է՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչութեան 2006 թուականի տեղեկատուական բիւլետենում նշուած է, որ ՀՀ-ի բնակչութիւնը 2006-ին կազմել է 2 միլիոն 976 հազար 372 մարդ: Փրոֆեսորը գրում է, որ էմպիրիկ հաշուարկների համաձայն, որոնք հիմնուած են բնակչութեան նուազագոյն թուաքանակի վրայ, որն անհրաժեշտ է Հայաստանի զինուած ուժերը համալրելու համար, երկրի բնակչութիւնը նուազագոյնը կը կազմէր 2 միլիոն 700 հազար մարդ: Բայց փրոֆեսորը որպէս ելքային տուեալ ընդունում է, որ 2008 թուականի Փետրուարին Հայաստանի բնակչութեան հաւանական թիւը չէր կարող գերազանցել 3 միլիոն 100 հազարը: Յղում անելով բազմաթիւ աղբիւրների, այդ թւում նաեւ «CIA World Factbook»-ին, հեղինակը պնդում է, որ ներկայումս Հայաստանի սահմաններից դուրս գտնուած է մօտ 750 հազար մարդ: Դրանք այն մարդիկ են, որոնք պահպանելով ՀՀ քաղաքացիութիւնը, աշխատանք գտնելու կամ ուսման նպատակով գտնուած են Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Եւրոպայի երկրներում: Նշուած թուերի վրայ հիմնուելով՝ հեղինակը եզրակացնում է, որ Փետրուարի 19ին Հայաստանի տարածքում գտնուած էր տարիքային բոլոր կատեգորիաների պատկանող 2 միլիոն 350 հազար մարդ (3 միլիոն 100000-ից հանած 750.000, ստացւում է 2 350.000): Հեղինակը նաեւ նշում է, որ մինչեւ 18 տարեկան անձանց թուի վերաբերեալ Հայաստանում պաշտօնական տուեալներ չկան: Կան տուեալներ միայն մինչեւ 15 տարեկան անձանց վերաբերեալ՝ 600 հազար 300: Մինչեւ 18 տարեկանների թիւը պարզելու համար փրոֆեսորը իրար է գումարել 1991-1992 թուականներին Հայաստանում ծնուած երեխաների՝ ներկայիս 16-17 տարեկանների ընդհանուր թիւը. 1991 թ.՝ 75 հազար, 1992-ին՝ 70 հազար: Այսպիսով, մինչեւ 15 տարեկանների առկայ թուերն ու 1991-1992 թուականներին ծնուածների թուերը իրար գումարելով ստացւում է, որ ՀՀ-ում կայ մօտ 745 հազար 300 քաղաքացի, որոնց 18 տարին դեռ չեն չի լրացել եւ հետեւաբար՝ նրանք ընտրելու իրաւունք չունեն: Այսինքն, նշուած 2 միլիոն 350 հազար մարդուց մօտ 745 հազար մարդ չէր կարող մասնակցել ընտրութիւններին, ուստի ընտրութիւնների օրը իրական ընտրական գումարը կազմում էր 1 միլիոն 605 հազար: Բացի այդ, նկատի առնե-

լով, որ պաշտօնական տուեալներով ընտրութիւններին մասնակցել է ընտրողների ընդհանուր թուի 69 տոկոսը, ապա ստացւում է, որ ընտրատեղամասեր է գնացել նշուած 1 միլիոն 605 հազարից միայն 1 միլիոն 123 հազար 500 ընտրող: Սակայն, ԿԸՀ-ի կողմից հրատարակուած տուեալների համաձայն, ընտրութիւններին մասնակցել է 1 միլիոն 671 հազար 27 մարդ: Հեղինակը նշում է, որ ԿԸՀ-ի հրատարակած 1 միլիոն 671 հազար 27-ից հանելով իրական՝ 1 միլիոն 123 հազար 500 թիւը, ստացւում է 547 հազար 527: Հենց նշուած թուերի տարբերութիւնը՝ 547 հազար 527-ը, ըստ փրոֆեսորի, Սերժ Սարգսեանի օգտին «գցուած» քուէների թիւն է: Այնուհետեւ Բալաքիրեանը Սերժ Սարգսեանին պաշտօնապէս տրուած 862 հազար 369 քուէից հանում է «գցուած» ձայների թիւը՝ 547 հազար 527 եւ եզրակացնում, որ յօդուած Սերժ Սարգսեանի նշուած քուէաթերթիկների թիւը կազմում է 314 հազար 842: Բալաքիրեանը նաեւ ընդգծում է, որ եթէ նկատի առնուեն նաեւ այլ թեկնածուներից գողացուած ձայները, ապա 314 հազար 842-ից կարելի է հանել եւս մի քանի տասնեակ հազար քուէ՝ թէպէտ դրանց ճշգրիտ թիւը գիտական մեթոդներով հնարաւոր չէ որոշել: Սակայն, բոլոր դէպքերում, փաստում է հեղինակը, առաջին փուլում Սերժ Սարգսեանի յաղթանակի մասին խօսք անգամ չի կարող, քանի որ նոյնիսկ Լեւոն Տէր-Պետրոսեանից (պաշտօնական տուեալներով 351 հազար 222) գողացուած ձայներով հանդերձ նա հազիւ է ձգում երկրորդ փուլ անցնելուն:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԼՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
  
ԽՍԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ՄՐՇԱԿ ՊԱՁԱՆԵԱՆ  
ԽՍԲԱԳՐԱՎԱՆ ԿԱՁՄ  
ՍԱՅԱԿ ՌՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ  
  
Գեղ. (626) 797-7680  
Ֆաքս. (626)797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



ԼՈՒՐԵՐ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ.  
«ԻՐԵՆՑ ՄՕՏ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՆՄԱՆ ԲԱՆ ԹՈՅԼ  
ՉԵԻՆ ՏԱՅ, ԻՍԿ ՄԵՉ ՄՕՏ ԹՈՅԼ ԵՆ ՏԱԼԻՍ»

Լեւոն Տէր-Պետրոսեան դժգոհութիւն է յայտնել եւրոպացի դիտորդներու պահուած քից: «Կոմերսանտ» թերթին տուած հարցազրոյցում նա պնդել է, թէ եւրոպացիները իրենց երկրներում չէին հանդուրժի նոյնը, ինչ հանդուրժում են Հայաստանում:



ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան

«Մի պարզ հարց տամ՝ եթէ ձեր բակալուէին տիկին Քլինտոնի 50 կողմնակիցներ կամ պարոն Սարկոզիի 50 կողմնակիցներ, ի՞նչ կը կատարուէր Միացեալ Նահանգներում եւ Ֆրանսիայում: Այնտեղ դա անթոյլատրելի է: Իսկ այստեղ կարելի է: Այնտեղ եւրոպացիները նման բան թոյլ չեն տայ: Իսկ այստեղ թոյլ են տալիս: Եթէ գոյութիւն ունեն չափանիշներ, ապա դրանք գոյութիւն ունեն բոլորի համար: Այն, ինչ չի հանդուրժում Եւրոպայում, չպէտք է հանդուրժուի նաեւ այստեղ: Այդ պատճառով էլ մենք դժգոհ ենք դիտորդների դիրքորոշումից», - ասել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Վուրդների նկատմամբ պարտաւորութիւններ ունեն: Եւ մենք պահանջում ենք, որ դրանք կատարուեն», - փաստել է Հայաստանի առաջին նախագահը:

«Կոմերսանտ»-ի թղթակցի հարցին, թէ ի՞նչ կը լինէր, եթէ Մարտի 1-ին Լեւոն Տէր-Պետրոսեանը չմնար իր առանձնատանը եւ գնար Ֆրանսիական դեսպանատան մօտ հաւաքուած ցուցարարների մօտ, նախագահութեան նախկին թեկնածուն պատասխանել է. - «Ի՞նչ կը լինէր: Կը սպանէին: Նրանց չենց դա էլ պէտք էր: Յետոյ դա կը վերագրէին ինչ-որ խուլիգանների: Կ'ասէին, թէ մի քանի հոգի, որոնք ինձանից դժգոհ էին, սպանեցին ինձ: Եւ դա աւելի շատ կ'ապակայունացնէր իրադրութիւնը», - եզրափակել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

«Ստացուած է այսպէս՝ ժամանում են եւրոպացիները եւ օրինականացնում են անօրինական ընտրութիւնները: ԵԱՀԿ-ն եւ Եւրախորհուրդը՝ մեր կազմակերպութիւններն են, մենք դրանց լիիրաւ անդամն ենք: Մեր կառավարութիւնները դրանց նկատմամբ պարտաւորութիւններ ունեն, բայց այդ կազմակերպութիւններն էլ մեր ժողովուրդն են»:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»  
ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մարտի 18-ին Խորհրդարանի միակ ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութիւնը յայտարարել է, որ ս.թ. Մարտի 1-ին Երեւանում արտակարգ դրութիւն հաստատելով՝ գործող նախագահը ընտրութիւնների արդիւնքները եւ դրան նախորդող ողջ գործընթացը դուրս բերեց օրինականութեան շրջանակներից՝ խախտելով ՀՀ սահմանադրութեան 53.1 յօդուածը: Մեր պետականութեան կարծատեւ ընթացքում՝ անգամ ամենադժուարին պահերին ու օրերին, սկսած 1991-1994թթ. Արցախեան ազատագրական պատերազմից մինչեւ 1999թ. Հոկտեմբերի 27-ի հաջեկչութեամբ պետութեան գլխատումը եւ դրանից յետոյ, երկրում կամ մայրաքաղաքում արտակարգ դրութիւն չի յայտարարուել, հրամանագրով չեն սահմանափակուել անձի քաղաքական ու քաղաքացիական իրաւունքները: Համոզուած լինելով, որ նախագահի այդ որոշումը համարժէք չէ իրավիճակին եւ հակասում է Հայաստանի միջազգային պարտաւորութիւններին, մասնաւորապէս Մարտի իրաւունքների եւրոպական կոնվենցիայի 6-10 կէտերին, «Ժառանգութիւնը» պահանջում է անյապաղ վերացնել արտակարգ դրութիւնը:

Ժութեան հեղինակներին:

Մենք կարեւորում ենք Մարտի 1-ի դէպքերի լիարժէք բացայայտումը, սակայն չենք վստահուած ՀՀ իրաւապահ մարմիններին: Այդ անվստահութեան հիմքը վերջիններիս կողմնակալ եւ շահախնդիր պահուածքն է: Այսպէս՝ ս.թ. Մարտի 8-ին նախքան ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորների հարցաքննումը ՀՀ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը լրատուամիջոցներով կանխակալ կարծիք յայտնեց, թէ պատգամաւորների խօսքերը սուտ են: «Ժառանգութիւնը» ՀՀ նախագահի եւ Ազգային ժողովի ուշադրութիւնը հրաւիրում է այն փաստին, որ պատգամաւորների քաղաքական ելոյթներին Աղուան Յովսէփեանի նոյնկերպ պատասխանելը ոչ այլ ինչ է, քան քաղաքականութեամբ զբաղւելու ապացոյց, ինչն արգելուած է օրէնքով եւ պաշտօնական լիազօրութիւնների գերազանցում է: Աւելին՝ Յովսէփեանը ԱԺ Մարտի 4-ի նիստի ժամանակ խեղաթիւրուած է ներկայացրել Արմէն Մարտիրոսեանի տուած ցուցմունքը՝ ասելով, թէ Արմէն Մարտիրոսեանը սաղրիչներին մասին ոչինչ չի ասել: Մենք վերը նշուածը գնահատում ենք իբրեւ կուսակցութեան նկատմամբ քաղաքական հետապնդման դրսեւորում եւ պահանջում ենք վերջ տալ նման արատաւոր գործելակերպին:

«Ժառանգութիւնը» գործող իշխանութիւններից պահանջում է պարզաբանել, թէ ով է մեր երկրում իրեն վեր դասում գլխաւոր օրէնքից՝ Սահմանադրութիւնից եւ ինչպէս կարող էին գինուած ուժերը մինչեւ արտակարգ դրութեան հաստատումը խառնուել ներքաղաքական կեանքին: Հայաստանի Հանրապետութեան իրաւապահ մարմիններից պահանջում ենք բացայայտել եւ օրէնքով սահմանուած կարգով պատասխանատուութեան ենթարկել Մարտի 1-ին ՀՀ քաղաքացիների հանդէպ իրականացուած ոճրագոր-

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ ԵՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ  
ՍՏԵՂԾՈՒԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԹԻ

Հայաստանեան մի շարք հասարակական կազմակերպութիւններ շաբաթ օրը իրենց անհանգստութիւնն են յայտնել լրատուական դաշտում ստեղծուած իրավիճակի առթիւ:

Երեւանի մամուլի ակումբը, Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէն, «Բազմակողմանի Տեղեկատուութեան Ինստիտուտ - Հայաստան»-ը, «Ինտերնիւս»-ը, Ժուռնալիստների «Ապարէզ» ակումբը, Վանաձորի Մամուլի Ակումբը, Հելսինքեան ֆալսեֆալսական Ասամբլիայի Վանաձորի գրասենեակը եւ «Թրանսփարենսի ինթերնէշնըլ» հակախոռուպցիոն կենտրոնը համատեղ յայտարարութեան մէջ նշում են, որ Մարտի 1-ից ի վեր տեղեկատուական ոլորտում եղել են օրինականութեան եւ արտակարգ դրութեան ռեժիմի բազմաթիւ խախտումներ:

արտայայտութիւնների հրապարակումը այլ թերթերում որեւէ կերպ չէր սահմանափակուած: Ըստ ԶԼՄ-ներից ստացուած տեղեկութիւնների, նախնական գրաքննութիւնն իրականացնում էին անձինք, ովքեր ներկայանում էին իբրեւ Ազգային Անվտանգութեան Մառաչութեան աշխատակիցներ», - նշում են յայտարարութիւնը ստորագրած կազմակերպութիւնների ներկայացուցիչները:

Մասնաւորապէս, ըստ յայտարարութեան հեղինակների, մի շարք լրատուամիջոցներ, խախտելով նախագահի հրամանագրի 4-րդ կէտի 4-րդ ենթակէտը, հրապարակում ու հեռարձակում էին ոչ միայն պաշտօնական տեղեկատուութիւն, այլեւ՝ քաղաքական քարոզչութիւն, որի մեծ մասը միակողմանի էր, ընդդիմութեանը վարկաբեկող ու վիրաւորող:

Հայաստանեան կազմակերպութիւնները պահանջում են՝ պատասխանատուութեան ենթարկել Հեռուստատեսութեան եւ Ռադիոյի Ազգային Յանձնաժողովին եւ Հանրային Հեռուստառադիոընկերութեան Խորհրդին՝ հեռարձակող ԶԼՄ-ներում անընդունելի իրավիճակի համար, հետաքննել ապօրինի գրաքննութիւն կիրառելու, ինտերնետային կայքերը արգելափակելու հանգամանքները եւ պատասխանատուութեան ենթարկել այդ հակօրինական գործողութիւններն իրականացնողներին ու նման հրահանգ տուողներին, անյապաղ վերանայել «Արտակարգ դրութիւն յայտարարելու մասին» Հայաստանի նախագահի հրամանագրի 4-րդ կէտի 4-րդ ենթակէտը:

«Նման անընդունելի լուսաբանման ամենացուցուն օրինակը տալիս էր Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերութեան 1-ին ալիքը (Հ1), որը ոչ միայն անտեսում էր Հրամանագրի դրոյթը, այլեւ հերթական անգամ կոպտօրէն խախտում էր «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» օրէնքի 28-րդ յօդուածի պահանջը, այն է՝ «Հանրային հեռուստառադիոընկերութիւն» (...) հեռարձակող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռութիւնը (...) արգելում է», - ասուած է յայտարարութեան մէջ:

Այս ամենից ելնելով հայաստանեան հասարակական կազմակերպութիւնները պահանջում են՝ պատասխանատուութեան ենթարկել Հեռուստատեսութեան եւ Ռադիոյի Ազգային Յանձնաժողովին եւ Հանրային Հեռուստառադիոընկերութեան Խորհրդին՝ հեռարձակող ԶԼՄ-ներում անընդունելի իրավիճակի համար, հետաքննել ապօրինի գրաքննութիւն կիրառելու, ինտերնետային կայքերը արգելափակելու հանգամանքները եւ պատասխանատուութեան ենթարկել այդ հակօրինական գործողութիւններն իրականացնողներին ու նման հրահանգ տուողներին, անյապաղ վերանայել «Արտակարգ դրութիւն յայտարարելու մասին» Հայաստանի նախագահի հրամանագրի 4-րդ կէտի 4-րդ ենթակէտը:

Յայտարարութեան հեղինակները նաեւ անդրադառնում են տպագիր մամուլում ստեղծուած իրավիճակին. - «Չնայած հրամանագրով մտցուած սահմանափակումները գրաքննութիւն չէին նախատեսում, ինչը նաեւ արգելուած է «Ձանգուածային լրատուութեան մասին» Հայաստանի օրէնքի 4-րդ յօդուածով, այդ օրերին ոչ միայն Երեւանում, այլեւ ողջ երկրում փաստացի կիրառուած էր նախնական գրաքննութիւն: Դրա հետեւանքով որոշ համերկային թերթերի տպագրութիւնն արգելուել էր բովանդակութեան պատճառով: Մի շարք հրատարակութիւններ, բախտելով անօրինական խոչընդոտների, հրաժարուեցին աշխատելուց, որովհետեւ հնարաւորութիւն չուներ ներկայացնելու ընդդիմադիր եւ քննադատական տեսակէտներ, այն դէպքում, երբ ընդդիմութեանը վարկաբեկող եւ վիրաւորող, յաճախ՝ ագրեսիվ

«Միեւնոյն ժամանակ, գիտակցելով, որ ստեղծուած իրավիճակի եւ օրինականութեան կոպիտ խախտումների համար պատասխանատու՝ այս յայտարարութեան մէջ չի շատակուած մարմինները գործում էին իշխանութիւնների վարած ընդհանուր քաղաքականութեան համատեքստում, մենք շեշտը դնում ենք ոչ թէ պատժի խստութեան, այլ խախտումների եւ պատասխանատուների իրաւական արձանագրման վրայ: Օրէնքի գերակայութիւնը եւ իրաւական նախադէպը յատկապէս կարեւոր են ապագայում խօսքի ազատութեան ոտնահարման որեւէ դրսեւորում բացառելու համար», - ասուած է Հայաստանեան հասարակական կազմակերպութիւնների տարածած յայտարարութեան մէջ:

րին եւ կոչ է անում համարձակութիւն ունենալ երկխօսութիւն սկսելու ներքաղաքական ճգնաժամի յաղթահարման ուղիների շուրջ:

ոստիկանութեան բաժանմունքներ են բերման ենթարկուած ՀՀ քաղաքացիներ, որոնցից շատերի դատապաշտպանական իրաւունքները չեն յարգուած, եւ նրանք դառնում են քաղաքական հաշուեյարդարի գոհներ:

«Ժառանգութիւնը» ողջունում է Հայաստանի քաղաքացիների, հասարակական կազմակերպութիւնների, միջազգային հանրութեան ներկայացուցիչների ջանքերը՝ ուղղուած մեր երկրում ներքաղաքական ճգնաժամի յաղթահարմանը: Սակայն դատապարտելին այն է, որ Խորհրդային 30-ական թուականներին ոճով ու ոգով ձերբակալուած,

«Ժառանգութիւնը» ստեղծուած իրավիճակից ելքը տեսնում է հանրային նոր, իրական ու ազնիւ երկխօսութեան մէջ, որը կը հանգեցնի ոչ միայն ազգային առաջընթացի, այլեւ գործելակերպի ու մտածողութեան նոր ոլակի:



ՐԱՅԱՍՏԱԼ

ԹՈՍԱՍ ԶԱՄՄԱՐԲԵՐԳ. «ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՅՍՕՐ ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Հայաստանում այսօր լուրջ խնդիրներ կան. հասարակութիւնը երկփեղկուած է, կայ բեւեռացում, մի շարք մարդիկ ձեռքակալուած են եւ դատուելու են: Բնականաբար, դրա արդիւնքում կան մտահոգութիւններ՝ կապուած մարդու իրաւունքների պաշտպանութեան հետ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ուրբաթ օրը ասաց Եւրախորհրդի մարդու իրաւունքների հարցերով յանձնակատար Թոմաս Համմարբերգը:



Եւրախորհրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Թոմաս Համմարբերգ

«Ակնյայտ է, որ այս ամէնի մէջ կայ քաղաքական ենթատեքստ: Քաղաքական գործիչների եւ, մասնաւորապէս, Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ժամանակ ես ասել եմ, որ անհրաժեշտ է սահմանափակել ձեռքակալութիւնները: Դատական հետապնդումները պէտք է իրականացուեն միայն այն դէպքերում, երբ կան բռնարարքների եւ յանցագործութիւնների իրական ապացոյցներ, այլապէս կը ստեղծուի այնպիսի իրավիճակ, երբ համատարած կասկածներ կը լինեն, որ մարդիկ ձեռքակալուել են իրենց գաղտնիարների համար»: - ասաց Եւրոպացի բարձրաստիճան պաշտօնեան:

Եւրախորհրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Թոմաս Համմարբերգը ասաց. - «Ձեռքակալուածներին ոմանք ծեծի են ենթարկուել, ինչը, իհարկէ, անընդունելի է: Ոմանք ասում են, թէ իրենք ամբողջութեամբ անմեղ են եւ ընդամէնը արտայայտել են իրենց կարծիքները: Իմ փաստարկն այն էր, որ այսպիսի իրավիճակում անհրաժեշտ է ապահովել արդարացի գործընթաց, եւ որ արդարադատութեան հիմնարար սկզբունքները պէտք է յարգուեն»:

Նշելով, որ հանդիպել է ձեռքակալուածների հետ՝ Թոմաս Համմարբերգը ասաց. - «Ձեռքակալուածներին ոմանք ծեծի են ենթարկուել, ինչը, իհարկէ, անընդունելի է: Ոմանք ասում են, թէ իրենք ամբողջութեամբ անմեղ են եւ ընդամէնը արտայայտել են իրենց կարծիքները: Իմ փաստարկն այն էր, որ այսպիսի իրավիճակում անհրաժեշտ է ապահովել արդարացի գործընթաց, եւ որ արդարադատութեան հիմնարար սկզբունքները պէտք է յարգուեն»:

Եւրախորհրդի մարդու իրաւունքների յանձնակատարը գերծ մնաց ձեռքակալութիւններին քաղաքական դնահատական տալուց: Նշեց միայն, որ աստիճանաբար, «քայլ առ քայլ թուլացում է արտակարգ իրաւորութեան ռեժիմը»:

Եւրախորհրդի մարդու իրաւունքների յանձնակատարը գերծ մնաց ձեռքակալութիւններին քաղաքական դնահատական տալուց: Նշեց միայն, որ աստիճանաբար, «քայլ առ քայլ թուլացում է արտակարգ իրաւորութեան ռեժիմը»:

Եւրախորհրդի մարդու իրաւունքների յանձնակատարը մտադիր է ՍԹՐԱՅԲԵՐԳ վերադառնալուց յետոյ ուսումնասիրել հաւաքուած բոլոր նիւթերը, ներառել՝ ստացուած տեսաժապաւէնները եւ DVD-ը, գնահատել իրավիճակը, որին յետոյ կը հրապարակուի մի փաստաթուղթ, որը կը ներառի առաջարկութիւններ Հայաստանի իշխանութիւններին՝ ինչպէս դուրս գալ ստեղծուած իրավիճակից եւ պաշտպանել մարդու իրաւունքները ապագայում:

«Եւրոպայի համար ժողովրդավարութիւնը Հայաստանում չափազանց կարեւոր է: Եւրոպայի խորհրդի համար ժողովրդավարութիւնը երկրի անդամակցութեան պայմաններից մէկն է: Ժողովրդավարութիւնը, մարդու իրաւունքները եւ օրէնքի գերակայութիւնը այն յենասիւններն են, որոնց վրայ կառուցուած է համաեւրոպական այս կառույցը, եւ ցանկացած պետութեան կարեւորագոյն խնդիրն է դրանք պաշտպանելը», - եզրափակեց Եւրախորհրդի մարդու իրաւունքների հարցերով յանձնակատար Թոմաս Համմարբերգը:

Հարցին, թէ ով է պատասխանատու մարտի 1-ի եւ 2-ի իրադարձութիւնների համար, Համմարբերգը արձագանքեց. - «Կարծում եմ, որ անհրաժեշտութիւն կա իրականացնել անկախ, պրոֆեսիոնալ եւ անկողմնակալ հետաքննութիւն, որը կը պարզի մարտի 1-ի առաւօտեան, կէսօրի եւ երեկոյեան իրադարձու-

ԵԱՅԿ-Ի ՄԻՆԱԿԻ ԽՄԲԻ ԶԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Միացեալ Նահանգները, Ֆրանսիան եւ Ռուսաստանի Դաշնութիւնը, որպէս Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցով զբաղուող Մինսկի խմբի համանախաձորներ, մարտի 14-ին ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլիայում հանդէս են եկել յայտարարութեամբ՝ Ատրպէյճանի գրաւեալ տարածքներում իրաւորութեան վերաբերեալ բանաձեւի դէմ քուէարկելու կապակցութեամբ:

«Դժբախտաբար այս բանաձեւի նախագիծը ընտրողաբար պաշտպանում է միայն որոշակի սկզբունքներ՝ բացառելով միւսները եւ առանց հաշուի առնելու համանախազահների առաջարկները իրենց հաւասակաշուած ամբողջութեան մէջ», - շարունակում են միջազգային միջնորդները: - «Այս ընտրողական մօտեցման պատճառով էլ ԵԱՅԿ-ի Մինսկի խմբի երեք համանախազահող երկրները պէտք է դէմ լինեն այս միակողմանի բանաձեւի նախագծին: Նրանք վերահաստատում են, որ Լեւոնային Ղարաբաղի խաղաղ, հաւասար պայմաններով եւ տեւական կարգաւորումը կը պահանջի կողմերի միջեւ անխուսափելի փոխզիջումներ, որոնք կ'արտացոլեն տարածքային ամբողջականութեան, ուժի չկիրառման, ժողովուրդների հաւասար իրաւունքների, ինչպէս նաեւ միջազգային օրէնքի այլ սկզբունքներ»:

«Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնութեան եւ Միացեալ Նահանգների քաղաքական մակարդակի ներկայացուցիչները՝ իբրեւ Մինսկի խմբի համանախազահներ, որոնք զբաղուած են Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցերով, 2007 թուականի Նոյեմբերին Մարդիկու տեղի ունեցած նախարարների խորհրդի նիստի օրերին համատեղ կողմերին են առաջարկել Լեւոնային Ղարաբաղի խաղաղ կարգաւորման հիմնարար սկզբունքների մի փաթեթ: Այս հիմնարար սկզբունքները հիմնուած են Հէլսինքեան եզրափակիչ փաստաթղթի դրոյթների վրայ, այդ թւում նաեւ այն դրոյթների, որոնք վերաբերում սպառնալիքներից կամ ուժի կիրառումից զերծ մնալու, պետութիւնների տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդների հաւասարութեան ու ինքնորոշման իրաւունքների վրայ», - ասուած է յայտարարութիւնում: - «Առաջարկը, որ փոխանցուել է կողմերին Մարդիկու, կազմուած է ներկայումս բանակցային փուլում գտնուող սկզբունքների հաւասարակշուած փաթեթից: Կողմերը համաձայնել են, որ ոչ մի առանձին տարր չի համարուի համաձայնեցուած մինչեւ բոլոր տարրերը չհամաձայնեցուեն»:

Մինսկի խմբի համանախազահող երեք երկրները դէմ են քուէարկելու այս միակողմանի բանաձեւի նախագծին, որը «սպառնում է թուլացնել խաղաղութեան գործընթացը»: Միաժամանակ նրանք «վերահաստատում են իրենց աջակցութիւնը Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեանը եւ այդպիսով չեն ճանաչում Լեւոնային Ղարաբաղի անկախութիւնը»:

ՆՈՐ ԱՐԳԵԼՔՆԵՐ

ՅՈՅՑԵՐՈՒ ԴԷՍ

Շարունակուած էջ 1-էն

ներէն ասդին ձեռքակալուած են Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցներէն աւելի քան 800 հոգի, որոնց մեծ մասը թէեւ ազատ արձակուած են, սակայն հարիւրէ աւելի մարդ կը մնան բանտերում մէջ, ուր անոնց նկատմամբ կը գործադրուին բռնութիւններ:

Պովրդական պայքարի գնով վերագտել է իր արժանապատուութիւնն ու ազատութեան ձգտումը: Նման պայմաններում ժողովրդի լիակատար իրաւունքն է՝ զանց առնել ապօրինի արգելքը, եւ ինքնուրոյն վերահաստատել միջազգայնօրէն սահմանուած, իր երկրի Սահմանադրութեամբ վաւերացուած, հանրահաւաքներ անելու իր ազատութիւնը», - ըսուած է Մարտ 18-ի յայտարարութեան մէջ:

Հակառակ այս բոլորին, Համաժողովրդական Շարժումի անդամ կուսակցութիւնները, անցեալ շաբաթավերջին առաջին անգամ ըլլալով հանդիպում ունեցան Մարտ 1-ի արիւնահեղութեանէն ասդին:

Միւս կողմէ, կը շարունակուի ընդդիմադիր գործիչներու ձերբակալութիւնները, որոնց նկատմամբ կը ներկայացուին իշխանութիւնը իւրացնելու մեղադրանք: Նախագահական ընտրութիւն-

ները վերահաստատեցին խաղաղ եւ ժողովրդավարական միջոցներով շարունակելու պայքարը՝ իշխանափոխութիւնը իրագործելու նպատակով:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱԳՆԵՐԸ ԿԸ ԿԱՐԾՐԱՑՆԷ

Շարունակուած էջ 1-էն

ստացած էր մասնակցելու «Հազարամեակի մարտահրաւերները» ամերիկեան ծրագիրին: Սակայն վերջին իրադարձութիւնները ստուեր դրին հաշկական ժողովրդավարութեան ամբողջութեան վրայ: Մենք կը դիմենք կառավարութեան՝ վերականգնել մամուլի ազատութիւնը, վերացնել արտակարգ իրաւորութիւնը եւ սկսիլ լայնածաւալ երկխօսութիւն հասարակութեան հետ», - յայտարարած է Մինսկի խմբի համանախազահ Մեթիւ Պրայլան:

ողբերգութիւն է, քանի որ զոհուած են մարդիկ: Այս լուրջ հարուած էր ժողովրդավարութեան: Չայն կարելի է բնութագրել որպէս յեղափոխութիւն կամ որպէս լուրջ հասարակական ընդհարում», - ըսած է Մեթիւ Պրայլան:

«Հայաստան բաւական յաջողակ էր ժողովրդավարութեան յառաջխաղացման բնագաւառէն ներս, այդ պատճառով ալ իրաւունք

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍԱՆՔԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՉ՝ ԱՐԴԱՐԱՄԻՏ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՍԵՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ԴՈՒՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՑԵԱՆ (ՈՒՍՈՒՑԻՉ, ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ)

Հայաստանի պետությունը գալիս է աշխարհի իշխանական համակարգը այլևս չի զարմացնում... Օգտուելով իր ձեռքին գտնուած գաւազանէն, ամէն պատկառանք կորսնցուցած՝ ճիգ չի խնայել Տարածաշրջանի իր հակառակորդները: Ծարպիկ խաղերով, խարդաւանքներով ու ապօրինի միջոցներով նախագահական աթոռը իրենց ձեռքը պահած Հայաստանի պետական այրերը, անոնց սայլին լծուած կամ աջակից խմբակցութիւնները, սփիւռքի իրենց ջատագովներով, ամէն ջանք կը թափեն սեւաջնելու ժողովրդական պոռթկումը, որ քիչ մնաց դուրս շարժելու ապականութեան ու կաշառակերութեան հովանաւորները իրենց քաղաքական միջնաբերդերէն: Այսօր այդ իշխանութիւնները կը փորձեն քաղաքական դիտարկներու վերածել ժողովրդական ցասման ղեկավարները, այսինքն 300,000-400,000 ցուցարարներու գլուխն անցած ընդդիմադիր առաջնորդները:

Այսօրուան իշխանական համակարգը միանգամայն կ'ուզէ փոշիի վերածել ու քաղաքական հրապարակէն վերացնել ապագային կրկին թատերաբեմ դուրս ելլելու ունակ ընդդիմադիրներն ու յատկապէս անոր հրայրքոտ ղեկավար Լեւոն Տէր-Պետրոսեանը, որ քաջութիւնն ու համարձակութիւնը կ'ունենար հրապարակելու իր ախտորոշումները:

Նոյն իշխանութիւնները կը շարունակեն յաւիտենականացնել տեղեկատուական շրջափակումը, որոշ չափով յաջողած են արդէն այդ բնագաւառին մէջ, ապա ապակողմնորոշիչ տեղեկատուութիւններով վարկաբեկել ընդդիմութեան ղեկավարները, մանաւանդ գործածելով այնպիսի լեզու մը, որ ցարդ չեն համարձակած ազերի ռազմատենչիկ ղեկավարներուն երեսին ըսելու: Չբաւարարուելով այսքանով, յանցագործ այդ համակարգը զանազան մեքենայութիւններով ու նախապէս խմբագրուած, շինծու ու տարատնկուած «տուակներով» յստակ միտում ցոյց կու տայ դատարան տանելու, մեկուսացնելու ընդդիմութիւնը:

Հայաստանէն դուրս սփիւռքի մէջ ալ ասդ ու անդ մէջտեղ կը հանուին ձախողած առաքեալներ, որոնք ամէնագէտ քաղաքագէտի

հովեր առած կը պարեն այդ իշխանութեան նուազին տակ՝ հայ ժողովուրդին ազգային ապահովութեամբ խիստ մտահոգիչ պատմուճանը հագած:

Ընդդիմութեան ու անոր ղեկավարութեան դէմ հրապարակ նետուած ամբաստանութիւններու բացարձակ մեծամասնութիւնը հիմնուած է յանցագործ համակարգի միակողմանի տեղեկութիւններու վրայ: Իշխանութեան լծակները հանդիսացող իշխանամէտ ու կողմնական մամուլն ու հեռուստատեսութիւնը կը հաղորդէ ինչ որ այդ իշխանութեան սպասարկողներու կողմէ կը հրահանուի: Այնքան ատեն որ մեզի կը զլացուի լսել ու մօտիկէն ծանօթանալ խաղաղ ցուցարարներու եւ անոնց ղեկավարութեան տեսակէտներն ու բացատրութիւնները, մենք բացարձակապէս չենք վստահիր իրաւացիութեանը այն բոլոր հաղորդումներուն ու տեղեկատուութեանց, որոնք կու գան պետական լրատուական միջոցներէն:

Մեզի համար ոչ մէկ արժէք կը ներայացնեն արդարադատութեան, նախագահական ու ոստիկանական «պաշտօնական» խօսակներէն հրապարակ նետուած մեղադրանքները: Մեզի համար վաւերական կը նկատուին այն անկախ ու ոչ-յանձնառու անձերու, դիտորդներու, թղթակիցներու, լրագրողներու եւ ազգային թէ միջազգային հիմնարկներու հաղորդումները, որոնք յաճախ կը գտնուին պետական-պաշտօնական հաղորդումներուն հակառակ բեւեռին վրայ:

Վերջերս կարգ մը սփիւռքահայ հաշուենկատ անհատ ղեկավարներ կը խօսին իրենց կազմակերպութեան անունէն՝ առանց խնդիրները քննարկած ըլլալու իրենց պատկանած կազմակերպութիւններու անդամակցութեան հետ: Եւ ասիկա կը կոչուի ժողովրդավարութիւն: Այդ սոփեստներուն ո՞վ տուած է այդ իրաւունքը: Հանրութեան կը հրամցուին «քննադատութիւններ» եւ դատապարտութիւններ Լեւոն Տէր-Պետրոսեանի ու անոր համախոհներու հասցէին: Մենք ո'չ միայն չենք բաժնեւոր այս միակողմանի, միտումնաւոր, ընդդիմութիւնն ու անոր ղեկավարութիւնը սեւեռնելու նպատակներով հիւսուած ու հեռարձակուած հաղորդումները, այլևս կոչ կ'ուղղենք ողի ի բոլին պայքարելու անոնց հեղինակներուն դէմ եւ ջրելու իրենց տեսակէտները: Այսօրուան «յաղթած» վարչակարգը ամէն ստոր միջոցի կը դիմէ իր հակառակորդ-

ները, աւելի քան 300,000 խաղաղ ցուցարար, առաւել ղեկավարութիւն, անարգանքի սիւնին գամելու, որպէսզի յաւերժացնէ իր դիրքերը: Մենք նաեւ կոչ կ'ուղղենք ամէն գնով ու միջոցներով անդադրում կերպով աշխատիլ ու լուսաբանել հայրենի ժողովուրդի այն հատուածը, որ ապակողմնորոշուած ու ապատեղեկացուած է: Ի՞նչ կ'ըսեն հակառակ բեւեռին վրայ կեցած մեր հայրենակիցները:

ա. Լեւոն Տէր-Պետրոսեան հրապարակ իջած է ոչ թէ այս վարչակարգի դէմ պայքարելու, այլ ամէն գնով իշխանութեան տիրանալու եւ վրէժ լուծելու:

Մենք կ'ըսենք. Լեւոն Տէր-Պետրոսեան պէտք չունէր տասը տարի սպասելու իր վրէժը լուծելու համար: Լեւոն Տէր-Պետրոսեան ծնունդն է ժողովրդական խորունկ ընդվզումի, որ քիչ քիչ, կաթիլ կաթիլ կը կուտակուէր, կը դառնար գետակ ու ապա հեղեղ: Խոնք մը հայրենակիցներ եթէ օգտուեցան Քոչարեանական վայրագ դրամատիրութեան ընձեռած «բարիքներէն», անդին հսկայական մեծամասնութեան մը ընկերային կացութիւնը օրէ օր աւելի վատթարացաւ: Այդ զգալի մեծամասնութիւնն էր, որ թիկունք կեցաւ սրտցաւ քննադատին: Առնուազն անբարոյութիւն է 300,000 եւ աւելի խաղաղ ցուցարարները ներկայացնել որպէս խաբուած քաղաքացիներ, որոնք կուրօրէն հետեւեան եղեր Լեւոն Տէր-Պետրոսեանին: Ինչպէ՞ս կարելի է բազմահազար մարդիկ դնել կոյր հաւաքականութեան տեղ: Ո՛չ. մենք այդքան վատ կարծիք չունենք մեր այդ հայրենակիցներուն հանդէպ:

բ. Լեւոն Տէր-Պետրոսեան արտաքուստ ժողովրդավարասէր է: Դեմոկրատ, բաց ներքուստ պոլիէտիկ:

Մենք կ'ըսենք. Պոլիէտիկները անոնք չեն միթէ, որ կոծկեցին Ազգային ժողովի վրայ կատարուած ահաբեկչական արարքը: Պոլիէտիկները անոնք չեն, որոնք հովանաւորեցին խորհրդարանական խարդախուած ընտրութիւնները: Ի վերջոյ, որոնք են պոլիէտիկները, եթէ ոչ վերջին տասը տարիներուն բուսած բազմամիլիոնատէր պետական այրերը, որոնք ինք օր սպասելէ ետք, երբ տեսան որ ընդվզած ժողովուրդը լուելու եւ յուսահատելու նշաններ ցոյց չի տար, որոշեցին դիմել 30-ական թուականներու մեթոտներուն՝ խարդաւանքին, զրպարտութեան, «փաստերու» տարատնկման ու

սադրիչ գործունէութիւններու, որպէսզի արդարացնէին գինեալ ուժերու յարձակումը ժողովուրդին վրայ, ցրուելու գայն եւ ապա վարկաբեկելու անոր ղեկավարութիւնը:

գ. Լեւոն Տէր-Պետրոսեան իր արարքներով, ելուցներով ու գործունէութեամբ սպառնալիք մըն է Հայաստանի ազգային անվտանգութեան:

Մենք կ'ըսենք. ահաւասիկ Տերթական կոտորուած գրպարտութիւն մը եւս: Որոնք են Հայաստանի ազգային անվտանգութեան սպառնացող խսկական ուժերը, եթէ ոչ անցնող տասը տարիներու ապաշնորհ ղեկավարները, որոնք ոչինչ ըրին արտագաղթը դադարեցնելու կապակցութեամբ: Որոնք են իսկական սպառնալիքներու հեղինակները, եթէ անոնք, որոնք Հայաստանի մէջ ամէն ինչ ծախու հանեցին՝ կոկիկ գումարներ գրպանելով իրենց ծառայութիւններուն դիմաց: Ո՞վ է ազգային անվտանգութեան սպառնացողը՝ այն որ կը մատնանչէ սպառնալիք եղող անձերը, թէ՞ անոնք, որոնք աշխատաւոր ժողովուրդը հասցուցին չքաւորութեան եզրին, հսկայ գանգուած մը, որ կը փորձէ հաց ձարել ու դնել սեղանին վրայ, գանգուած մը, որ գրկուած է ընկերային ու բժշկական նուազագոյն ծառայութիւններէ, երանելի է այն հայրերուն վիճակը, որոնք հարազատ մը կամ հարազատներ ունին հայրենիքէն դուրս, որոնք յաճախ ստորին աշխատանքներով կը հոգան ապրուստը ետեւ մնացածներուն: Ինչպէ՞ս կ'ուզենք որ այս հոծ գանգուածը հայերուն հոգեպէս ու սրտանց պատրաստ ըլլայ իր արիւնը տալու հայրենիքի պաշտպանութեան համար:

դ. Լեւոն Տէր-Պետրոսեան անարգած է մեր ազգային արժէքները, յատկապէս Հայաստանեայց եկեղեցւոյ վեհապետը՝ չընդունելով իր միջնորդական առաքելութիւնը:

Մենք կ'ըսենք. յանուն Ս. էջմիածնի գերագոյն շահերուն առայժմ չենք ուզեր տալ մեկնաբանութիւններ այս առնչութեամբ:

ե. Ընդդիմադիրներու ղեկավարը մեծագոյն վնասը կը հասցնէ ազգային արժանապատուութեան ու Հայաստանի անվտանգութեան՝ հրաւիրելով միջազգային կազմակերպութիւններ, որպէսզի դատեն ու գնահատեն Փետրուար 19-ին, անոր նախորդող ժամանակաշրջա-

Շաբ.բ էջ 19

The Quality and Safe Choice for Your Child's High School Education
AGBU HIGH SCHOOL – PASADENA
OPEN ENROLLMENT FOR 2008-2009
Grades 9-12
The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.
Please call (626) 794-0363



ԱԶԳԱՅԻՆ

ՎԱՅԱՍԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՎԱԿԱՆ ԱԹՈՒ ԿՈՉ ԱՌ՝ ՏԻԱՐՔ ՈՐՔԵՐՑ ՔՈՉԱՐԵԱՆ ԵՒ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայ եւ Միջազգային լրատուութիւններ կը հաղորդեն որ Հայաստանի մէջ, նախագահական ընտրութիւններէ ետք ժողովրդական լայնածաւալ դժգոհութիւններ եւ ընդվզումներ տեղի ունեցան, եւ կ'ունենան դեռ՝ որովհետեւ իշխանութիւններու կողմէ ընտրական շատ մեծ խախտումներ եւ ապօրինութիւններ կատարուած են:

Ժողովրդական եւ լրատուական հաղորդումներ կը վկայեն նաեւ որ պետական իշխանութեանց ներկայացուցած արդիւնքը, ամբողջապէս անճիշդ է եւ խարդախուած:

Կը տեղեկագրուի եւս՝ որ պետական իշխանութիւնները, ընդմիշտ լռեցնելու համար ժողովուրդի արդար պահանջքը՝ դիմած են աներեւակայելի բռնարարքներու: Այդ բռնարարքներու հետեւանքով սպանուած են շարք մը անմեղ հայեր, ծանրօրէն վնասուած եւ խոշտանգուած են շատ մը անմեղ ցուցարարներ: Հայաստան այս արարքները երբեք թոյլատրելի չեն մեր հայրենիքէն ներս:

Ներկայիս Հայաստանի մէջ կը տիրէ համատարած անապահովութիւն. անհանդարտ եւ խառնակ կացութիւն:

Այսու Լոս Անճելոսի (որ սփիւռքի մեծագոյն հայահոծ գաղթօճախն է) հայ մտաւորական, գրող, խմբագիր եւ սրտցաւ հայ ազգայիններս՝ ի տես Հայրենիքէն ներս գոյութիւն ունեցող տիրու վիճակին, այսու գիրով կը ներկայացնենք ձեզ մեր հետեւեալ համեստ կոչը.

Մեծայարգ Տիարք՝ Ռոբերտ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան.

Շուրջ տասը տարիներէ ի վեր դուք, որպէս Հայաստանի Հանրապետութեան նախագահ, վարչապետ, Պաշտպանութեան նախարար եւ բանակի հրամանատար՝ վարած էք Հայաստանի պետական իշխանութիւնը:

Դուք ձեր բռնած իշխանութեան՝ ձեզի ընձեռած իրաւասութեանց շնորհիւ, այլամերժօրէն ձեզի միայն ենթարկած էք Հայաստանի հեռուստատեսութեան կայանները, մասամբ նաեւ՝ լրատուական միջոցները: Ոստիկանական, դատական եւ կառավարական այլ եւ այլ լծակները եւս դուք առած էք ձեր

հակակշռին ներքեւ: Դուք եւ ձեր անմիջական գործակալները, տարբեր ճանապարհներով՝ ձեզ համար ապահոված էք նիւթական առասպելական հարստութիւններ:

Մինչդեռ մեր հայրենի ժողովրդի ստուար մեծամշամութիւնը՝ կ'ապրի յետին աստիճանի չքարուորութեան եւ աղքատութեան մէջ:

Հայրենիքի մէջ, մեր ժողովուրդի մեծամասնութիւնը կը տուճատի անգործութենէ, ընտանիքի ծախսերը հոգալու միջոցներու անբաւարարութենէ, երկրէն ներս տիրող կոռուպցիայի եւ անարդարութիւններէ:

Այս եւ այլ պատճառներու հետեւանքով մեր հայրենի ժողովուրդի՝ համարեայ կէսը, լքած է Հայրենիքը եւ մեկնած տարբեր երկիրներ:

Երեւոյթը ողբերգական է եւ համագօր (գենոսիտի), ցեղասպանութեան:

Հարկ կա՞յ յիշելու նաեւ՝ որ ձեր իշխանութեան օրով տեղի ունեցաւ Հոկտեմբեր 27-ի այն ողբերգական ոճրագործութիւնը եւ կամ դաւադիր սպանութիւնը, որ իլեց կեանքը մեր պետական ավանդի կարեւորագոյն դէմքերուն:

Դուք քաջ գիտէք եւ զաղտնիք չէ որ ժողովրդավարական արդար քուէարկութիւններով չէ որ դուք տիրացած էք ձեր ներկայ պաշտօններուն:

Կասկածէ դուրս է եւ յստակ՝ որ թէ Հայաստանի եւ թէ Սփիւռքի մեր ժողովուրդի ստուար մեծամասնութիւնը կը փափաքի որ դուք հեռանաք պետական իշխանութեան ձեր բռնած դիրքերէն:

Դուք հրաժարելով ձեր ներկայ պաշտօններէն, շատ աւելի կը հնահատուիք եւ կը մեծնաք ժողովուրդի առջեւ քան թէ պաշտօնի վրայ մնալով:

Մենք ականատես եղանք ժողովրդական այն հաւաքներուն, ուր շուր երկու հարիւր հազար հայեր ձեր անունը տալով կը գոռային՝ «Հեռացէ՛ք, հեռացէ՛ք»:

Ինքնասիրութիւն ունեցող ունէ մարդ, ինչպէ՞ս կրնայ կառչած մնալ աթոռի մը, որ ժողովուրդի

Շարք էջ 19

ՄԱՐՏԻ ՄԵԿՐ՝ ԵՐԵՒԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ



Միտքի, յոյզի անկարելիւն երէկուան Ինչպէ՞ս հասաւ զարհուրանքի հանգրուանին այս անել, Հազարամեակ մը երազուած հայ պետութեան հրահանգով Հայ գինուորներն ինչպէ՞ս կրցան մարել լոյսը հայ կեանքերուն, Ինչպէ՞ս կրցան հայու անուամբ մարդասպաններն այս նախճիրին Նոյն գիշերի լուսեան մէջ նայիլ իրենց զաւակներուն Բաց աչքերուն ու քուն մտնել, եւ արթննալ առաւօտեան՝ Բարեւելու սեւով պատած արեւ մը մութ եւ աւեր:

Հերոսական Շուշիի բարձունքներէն անառիկ Ուր դեռ երէկ կը ճախրէին արծիւները մեր խրոխտ՝ Գայլերն իջան Երեւան, Անոնք իջան Ազատութեան հրապարակ Ուր արթնացած բազմութիւնը հաստատական Կը փսփսար առաւօտեան դեռ երազկոտ հնչիւններով. «Հայր մեր որ յերկինս ես, «Եկեցցէ արդարութիւն քո, ազատ մեզ ստրկութեան շղթաներէն»:

Գայլերն իջան Երեւանի հրապարակն Ազատութեան, Դիմակաւոր ու սեւագգեստ գիշատիչներն երկուտանի՝ Իրենց ձեռքին մահ տեղացող հրազէնի կրակներով՝ Հայ մայրերու, հայ հայրերու, կտորիճներու ուղիղ կուրծքին, Ուղիղ սիրտին ազատատենչ երազներուն Որ խափանեն խոյանքն ազատ ժողովուրդին, Որ ականջներն իշխողներուն յանցապարտ Զխլանան հնչիւններով. «Հայր մեր որ յերկինս ես...»:

Եթէ քաջ էք եւ անմեղ, ինչո՞ւ այսքա՞ն դիմակներ, Ինչո՞ւ ձեր վախն ու վատութիւնն ըրած դիմակ՝ կը յօշոտք ամնուն: Դիմակներ, դիմակներ \_ Մարդասպանը՝ քաջ Շուշիի վեհ մարտիկի դիմակով, Դաւաճանը՝ ոստիկանի, հայ գինուորի դիմակով, Դիւանագէտն ստրկամիտ՝ նախարարի դիմակով, եւ աւագակն ու բազմիցս արնաթաթախ ձեռքերով Ոճրագործը՝ վարչապետի, նախագահի դիմակով:

Տեր Զօրի բորբ աւագներէն, Սոււկայիթի հրդեհներէն Երեւանի մինչեւ կեղոռն՝ Ազատութեան հրապարակ Գոյամարտի դիւցազնական կոչով իջած Ազատութեան շունչն էք հիմա Իմ եղբայնէր եւ իմ քոյրէ՛ր քաջարի: Որքան դաժան, նոյնքան վսեմ Մեր պատմութեան նոր կերտիչներն էք դուք հիմա Երեւանի միջնաբերդի զաւթիչ ներքին ոսոխն դէմ:

Advertisement for Atlantis Restaurant and Night Club. The ad features a woman in a pink belly dancing costume on the left, a hookah with colorful smoke in the center, and a group of belly dancers in the background. Text includes: 'ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB', 'FRIDAY NIGHTS AT ATLANTIS ARABIAN NIGHTS', 'ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ', 'EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS', 'authentic cuisine', 'full hookah bar', 'VIP membership', 'full cocktail bar', 'live belly dancing', 'live music and DJ', 'ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB', '626.449.4599', '162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107'.







**ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ**

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ  
ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ  
«ՏՕՆԵՄՔ ԶՔՈ ՅԱՐՈՒԹԻՒՆ»**

Աշխարհի պատմութեան եւ մարդկութեան կեանքին մէջ մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուս Քրիստոսի Յարութիւնը հրաշալի այն դէպքն է, որուն տարողութեան հաւասարը չէ եղած եւ չի կրնար ըլլալ, քանզի Աստուծոյ հօր Աջին ներգործութեան կնիքը կը կրէ այդ: Քրիստոսի Յարութիւնը կ'առնէ մեռելներէն եւ իր Յարութեամբ մարդկանց կը պարգեւէ վերստին կենդանութեան շունչը: Եւ մենք որպէս քրիստոնեաներ կը տօնենք Յիսուսի Յարութիւնը, քանզի Անոր մէջ իսկ կը գտնենք նոր կեանքին խորհուրդը: Քրիստոսի Յարութեան խորհուրդին ակնդէտ Մեծ Պահոց հոգեւոր ճանապարհորդութեան ընթացքին մեր հոգին ու միտքը կը պատրաստենք ապրելու համար Յարութեան Փրկչի ներկայութիւնը եւ Անոր աստուածային գործութեան առաջնորդութեամբ թօթափելու մեր վրային հին մարդը:

Տօնել Քրիստոսի Յարութիւնը կը նշանակէ նորոգել մեր քրիստոնէական հաւատքը եւ լուսաւորուիլ Քրիստոսի ներգործական ներկայութեամբ մեր էութեան ու աւօրեայ կեանքին մէջ:

Տօնել Քրիստոսի Յարութիւնը կը խորհրդանշէ նոր կեանք մը ապրիլ: Ուրիշ խօսքով իմաստաւորել կեանքին ընթացքը եւ անընդհատ յայտարարել Առաքեալի խօսքը. «Զի ինձ կեանք Քրիստոս է» (Փիլիպ. 1:22):

Տօնել Քրիստոսի Յարութիւնը Հայց. Առաքելական Եկեղեցոյ հարազատ զաւակներուն համար կը նշանակէ կառչած մնալ մեր հայրերու հաւատքի կեանքին ու սրբազան աւանդութեանց եւ աւելին՝ տէրը կանգնիլ մեր Սուրբ Եկեղեցոյ, որպէսզի Ան շարունակէ մատակարարել իր զաւակներուն Աստուծոյ ճշմարիտ խօսքը:

Տօնել Քրիստոսի Յարութիւնը Հայց. Առաքելական Եկեղեցոյ հաւատաւոր զաւակներուն համար կը բացատրէ անոր մէջ գտնել նաեւ յաւիտենական կեանքին խորհուրդը:

Տօնել Քրիստոսի Յարութիւնը Հայց. Առաքելական Եկեղեցոյ հաւատաւոր զաւակներուն համար կը խորհրդանշէ ապրիլ Քրիստոսի Աւետարանը՝ իր բոլոր պատգամներով, որոնք կը լուսաւորեն մարդուն կեանքը աստուածային սիրով, ներողամտութեան ոգով, բարեգործութեան զգացումով եւ տակաւին բազում առաքինութիւններով:

Վերջապէս, տօնել Քրիստոսի Յարութիւնը կը նշանակէ նոր միութիւն մը հաստատել Աստուած եւ Մարդ յարաբերութեան մէջ:

Քրիստոսի Յարութեան Տօնին առիթով մեր սրտի բարի մաղթանքները մեր թեմի հեղեւոր սպասաւորաց, Թեմական եւ Միական բոլոր մարմիններուն, եւ հաւատաւոր ժողովուրդին: Թող Տիրոջ Սուրբ Յարութիւնը դառնայ լոյսի ճանապարհը բոլորիս կեանքին մէջ, որ մեզ կը տանի դէպի Աստուած, դէպի բարին ու զեղեցիկը, դէպի յաւիտենական, հոգեւոր ու բարոյական արժէքները:

Սուրբ Զատիկական Տօնի ուրախ առիթով յանուն Թեմի հոգեւորականց, Թեմական Խորհուրդին, պատկան մարմիններուն ու հաւատաւոր ժողովուրդին մեր ջերմ ու որդիական զգացումները կը յղենք Ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որպէսզի Հայ-



րապետական իր օծեալ մականին ներքոյ յարատեւօրէն բարգաւաճի Սուրբ Էջմիածինը, Հայց. Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցին ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Քրիստոսի Յարութեան ի մեռելոց Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Մնամք ջերմ սիրով,  
Աղօթարար՝  
ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ  
Առաջնորդ

**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՊԱՏԳԱՄԸ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ԱՌԹԻ**

Քրիստոսի յարութիւնը ամենէն հիմնական եւ նշանակալից դէպքն է քրիստոնէական պատմութեան մէջ: Պատմական այս դէպքը կը զանազանէ քրիստոնէութիւնը միւս կրօններէն: Քրիստոս բոլոր կրօններու հիմնադիրներէն հիմնովին կը տարբերի անով որ՝ Ան մեռաւ, բայց յարութիւն առաւ եւ յաւիտ կենդանի իրականութիւն է գինք ճշմարտապէս պաշտող մարդոց կեանքին մէջ:

Քրիստոսի յարութիւնը Յիսուսի աշակերտներուն եւ առաքեալներուն քարոզութեան բներգն է: Իսկ Պօղոս Առաքեալին համար՝ իր վկայութեան եւ աւետարնչական գործին անկիւնքարը: Այսպէս կը գրէ ան. «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը: Բայց ոչ. Քրիստոս արդարեւ յարութիւն առած է» (Ա. Կրօնթ. 15:14,20):

Ըստ Պօղոս Առաքեալի, Քրիստոսի յարութիւնը անհրաժեշտ էր, որովհետեւ առանց յարութեան մարդկութեան փրկութիւնը անկարելի պիտի ըլլար: Մահունէ պարտուած Յիսուսը պիտի չկրնար Փրկիչ ըլլար մարդկութեան: Առանց

Քրիստոսի յարութեան անոր մահը առ առաւելն մարտիրոսութիւն մը պիտի ըլլար, ոչ աւելի:

Եթէ Քրիստոս յարութիւն առած չ'ըլլար, անոր խօսքերն ու գործերը իրենց յաւիտենական արժէքը պիտի կորսնցնէին, մարդոց հաւատքը այս բաներուն մասին ընդունայն պիտի ըլլար:

Այս թուիչքով, Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրեց \$4.1 միլիոն արժողութեամբ ղեղօրայք եւ բժշկական պիտոյքներ, զորս նուիրած էին Hope for the City կազմակերպութիւնը (\$3.1 միլիոն արժողութեամբ), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութիւնը (\$432,000), AmeriCares կազմակերպութիւնը (\$412,000), Քանատայէն՝ Health Partners International կազմակերպութիւնը (\$89,000) եւ Direct Relief International կազմակերպութիւնը (\$88,000):

Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թուիչքին - Հայաստանի Ակնաբուժական Ծրագիրը (\$265,000), Բժ. Հրայր Յովակիմեան (\$65,000), Ուոլթըր Պանտազեան (\$65,000), Հայաստանի Ամերիկեան Համալսարանը (\$63,000), Գերմանիայէն՝ Հեռախոսաբանութեան Միջազգային Ակադեմիան (\$53,000), Հաուըրտ Գարակէօզեանի Յիշատակի Ընկերութիւնը (\$50,000), Հայկական Օգնութեան Ֆոնտը (\$49,000), Ամերի-

կայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (\$46,000), եւ Արմէն Միսեան (\$32,000):

Թուիչքին մասնակցեցան նաեւ Բժ. Սամուէլ Մալայեան (\$20,000), Բժշ. Սթիվըն Քաշեան (\$18,000), Հայ Աւետարանական Առաքելութիւնը (\$17,000), Ֆլէշըր Համալսարանը (\$12,000), եւ Գալիֆորնիոյ Ամերիկահայ Բժշկական Միութիւնը (\$9,000):

1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 146 թուիչքներով եւ 1,546 ծովային արկղներով \$520 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագործարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:

Յաւելեալ տեղեկութեան համար, դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 301, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:



### Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

### HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent  
1807 W GLENOAKS BLVD. #202  
GLENDALE, CA 91201  
(818) 502-3233  
HARUT@EXCELHYE.COM  
WWW.EXCELHYE.COM  
CA Insurance  
License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119



**ՄՈՒՐԲ ԶԱՏԻԿ**

**ՄՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԻՍՈՐ**

**ԴՈՒՏ. Տ. ԶԱԽԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

Յարութեան կենսատու շունչը կը բուրէ ամէնուրեք ուր բնութիւնը ծաղկած, դաշտերը կանաչ, կենդանութեան աւետիսն է որ կը սփռեն չորս կողմ: Գարուն է, անցած են ձմեռնային սառնամանիքն ու ցուրտը, արեւն է շողուն, տաք ու կենսատու: Քրիստոսի Եկեղեցին նոյն ջերմութեամբ կը պարզելէ աշխարհին կեանքն ու վերածնունդը՝ Քրիստոսի Ս. Յարութեան ճշմարիտ վկայութեամբ, աւարտելէ ետք քառասուորեայ պահքն ու մահաբեր խաչելութիւնը Քրիստոսի:

Քրիստոսի Յարութեան մասին հաւատքը հիմնուեցաւ «Թափուր գերեզմանին» վրայ, ուր Փրկիչը, իր չարչարանքներէն ու խաչելութենէն ետք թաղուած էր որպէս մարդ, եւ սակայն անկէ յարութիւն առած էր որպէս Աստուած, անցնելէ ետք մարդկային կեանքի բոլոր ոլորտներէն: Թափուր գերեզմանը վկայութիւնը եղաւ իր իսկական յարութեան եւ Յարուցեալ Փրկչի մշտնջենական ներկայութեան իր Սուրբ Եկեղեցիէն ներս՝ Ս. Հոգիի մշտանորոգ գորութեամբ:

Խաչը մնաց որպէս գրաւական, ու գերեզմանը՝ որպէս դատակնիք: Առաջինը եղաւ պաշտամունքի նշանը, եւ երկրորդը՝ Խաչին վկայարանը: Քրիստոս իսկապէս յարութիւն առած էր ըստ Աւետարաններուն, ու Յարուցեալը որպէս Տէ՛Ր շրջած էր քառասուն օրեր եւս հաստատելու համար իր առաքեալներուն մէջ հաւատքն ու գորութիւնը՝ շարունակելու իր գործը, այս անգամ իր խորհրդաւոր Մարմինն՝ Եկեղեցիին միջոցաւ:

Հարցը այն չէ թէ ինչպէս Ան Յարութիւն առաւ, եւ կամ թէ կնքուած գերեզմանը ինչպէս բացուեցաւ: Հարցը պարզօրէն գերեզմանին թափուր գտնուած ըլլալն է, եւ երկնային պատգամը թէ «Ձէ աստ, այլ յարեալ», որոնց վրայ հաստատուեցաւ առաջիններուն հաւատքը ու յետիններուն համոզումը՝ թէ Քրիստոս իսկապէս յարութիւն առաւ: Իր խոստումներուն հետեւանքն եղան թէ՛ իր յարութիւնը եւ թէ՛ անկէ ետք Ս. Հոգիի գալուստը, որոնք երկուքը միասին

կնքեցին Աստուծոյ ծրագիրը մարդոց եւ աշխարհի նկատմամբ, հաստատելով Քրիստոսի հետեւորդներուն հաւատքն ու ճշմարիտ կեանքը:

Սուրբ Յարութեան աւետիսով մահէն անդին կեանքն է որ հռչակուեցաւ, այսինքն, մարդկային կեանքի տեւողութեան ընթացքին Աստուծոյ Թագաւորութիւնն էր որ երկինքէն երկիր իջաւ ու մարդիկ Քրիստոսով երկնաքաղաքացիները եղան այդ Թագաւորութեան: Մարդիկ հաւատալով Յարութեան կենսատու գորութեան, ճաշակեցին ու կը ճաշակեն ընդմիջտ Աստուծոյ Թագաւորութեան բարիքները մինչ կ'ապրին այս աշխարհի վրայ: «Եկեցէ արքայութիւն քո» ա՛յս կրնայ նշանակել մեզի համար, եւ ո՛չ թէ սպասել ապարդիւն ու ձեռնածալ, որ մահէն ետք մենք եւս ժառանգենք Երկնքի Արքայութիւնը, առանց մասն ու բաժինը ըլլալու անոր՝ երկրի վրայ, մեր գործերով ու յանձնառութիւններով:

Հրաշափառ Սուրբ Յարութեամբ այսօր մենք կեանք կը ստանանք, յոյս կը սփռուի ամէն կողմ՝ հաւատքի գորութեամբ: Ապագան աւելի պայծառ կը դառնայ երբ մարդիկ ներկայի դժուարութեանց մէջ մխրճուած՝ շփոթի մասնուած են ու ազգեր իրար դէմ ելած գիրար կը յօշոտեն: Քրիստոսի Յարութեամբ երկինքը կրկին կը բանայ իր դռները, եւ երկիրը կը դառնայ պատուանդանը երկնքի, ուր քրիստոնէաներ Յարուցեալ Տիրոջ ներկայութիւնը փառաբանելով, ԽԱՉՆՈՒ ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ իրենց առօրեայ կեանքին բաժինը կը դարձնեն:

Երանի թէ ազգեր ու ժողովուրդներ, Հայաստան մեր հայրենիքն ու հայ ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, Ս. Չատիկի այս հոգեպարար օրերուն յիշեն Տիրոջ Խաչն ու Գերեզմանը, ու անոնցմով հարստացած շնորհք բերեն աշխարհին, կատարելով Աստուծոյ կամքը, եւ ո՛չ թէ իրենց կամքը:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ ԻՄԵՌԵՆԼՈՅ**  
**ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

**ՉԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՅՊԱՏԳԱՍՐ**

**Շարունակուած էջ 8-էն**

լոյսին եւ յաւիտենական կեանքին: Չատիկը ցնծութեան եւ յոյսի տօնն է, որովհետեւ ան կ'ոգեկոչէ Յիսուս Քրիստոսի յաղթական յարութեան դէպքը: «Ձէ աստ քանզի յարեալ» ամենէն հրաշալի լուրն է որ աւետաբեր հրեշտակը կու տար առաջին Չատիկուան առաւօտը իւր դաբեր կանանց, որոնք «ողջը մեռելներուն մէջ կը փնտռէին»:

Բայց աւելին, Քրիստոնէական եկեղեցին քսան դարերէ ի վեր հռչակած է Քրիստոսի հրաշափառ յարութիւնը ոչ միայն իբրեւ պատմական դէպք, որ պատահեցաւ Աւագ Ուրբաթէն քանի մը տասնեակ ժամեր ետք Միաշաբաթի առաւօտուն, այլ նաեւ, բայց մաւանանդ՝ որպէս անձնական փորձառութիւն Յիսուսի առաջին հետեւորդներուն կողմէ, եւ այնուհետեւ քսան դարերու ընթացքին միլիոնաւոր հաւատացեալներու կողմէ:

Արդարեւ, իր պատմական տարողութենէն տարանջատաբար՝ յարութիւնը մեծապէս նշանակալից կը դառնայ երբ անձնական փորձառութեան վրայ հիմնուած է:

Մարդիկ կրնան պատմական դէպք մը ուրանալ, կրնան կրօնական վարդապետութիւն մը հերքել, բայց անձնական փորձառութիւն մը անուրանալի եւ անհերքելի է:

Քրիստոսի աշակերտները հաւատացին ոչ միայն անոր համար

որ իրենք յարուցեալ Յիսուսը տեսան, անոր հետ սեղան նստան եւ կերակուր կերան, անոր հետ քալեցին եւ անոր ֆիզիքական ներկայութիւնը վայելեցին, այլ նաեւ անոր հոգեւոր ներկայութիւնը իրենց համար ամէնօրեայ փորձառութիւն դարձաւ: Պօղոս Առաքեալ Յիսուսի յարութեան ակնատես չըլլալով հանդերձ յարութեան գօրութիւնը զգացէր էր իր կեանքին մէջ, եւ կրցած էր ըսել, «Ես չէ որ կ'ապրիմ, այլ Քրիստոսն է որ կ'ապրի իմ մէջս» (Գաղ. 2:20):

Այդ փորձառութիւնը դարեր շարունակ քանիցս կրկնուած է մարդոց կեանքին մէջ, որոնք, իրենց կարգին, Քրիստոսի յարութեան գօրութիւնը զգացեր են իրենց կեանքին մէջ. իրենց կեանքը յեղաշրջուէր է եւ իրենց հոգին նորոգուէր: Անոնք իրենց մեղքերու գերեզմանէն յարութիւն առնելով, կրցած են իրենց կեանքով եւ կենցաղով վկայել թէ՛ Քրիստոս յարութիւն առած է եւ յաղթական Տէր է: Եւ իրենք ալ անոր յարութեան գօրութեամբ՝ յարութիւն առած են իրենց մեղքի գերեզմանէն եւ կրնայ լիաթոք յայտարարել.

«Քրիստոս Յարեալ ի մեռելոց»


Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի»:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուրիկեան

Գործադիր Տնօրէն Հայ Աւետ. Համաշխարհային Խորհուրդի

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով:  
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**  
**ԱՅՆԹԱՊԻ ԷՆՐՈՍԱՄԱՐՏԻ 88-ՐԴ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ**  
Կեդմակեպոթեանք  
**Հ Ա Յ Ա Յ Ն Թ Ա Պ Ց Ի Ն Ե Ր Ո Ւ**  
**Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն**  
Օրոյն Բանախօս՝ Հայեպէն Հրատկութեան  
Տոքթ. Թորոս Թորանեան  
ՄԱԿԵՐՈՑԹ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ  
Կիրակի, 6 Ապրիլ 2008, կէսօրէ ետք ժամը 2:00-ից  
Հ.Բ.Մ.-ի Ալեք Մամուկեան Կեդրոնի «Պոյաճեան» սրահին մէջ  
2495 E. Mountain St., Pasadena  
  
**ARMENIAN AINTABTYZY CULTURAL ASSOCIATION**  
Presents  
**The 88th Anniversary Commemoration of Aintab Heroic Resistance**  
with a Luncheon and a Program  
Keynote Speaker  
Dr. Toros Toranian  
of Aleppo, Syria: Historian and Author  
Sunday, April 6, 2008, at 2:00 p.m.  
at A.G.B.U. Alec Manoogian Center - Boyajian Hall  
2495 E. Mountain St., Pasadena  
Donation/ Ժաշագի՛ 535  
Children under 12/Պատանիներ 12 տարեկանէն վար՝ \$20  
For Reservations Call • Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել՝  
Mrs. A. Khanjian (626) 355-3697, Mrs. M. Ekmekjian (626) 488-1953 or Mr. H. Demizjian (818) 783-7268

*Saint Gregory Ladies' Society*  
CORDIALLY INVITES YOU TO THE  
**43<sup>rd</sup> Annual**  
LUNCHEON & FASHION SHOW  
**Bon Marché**  
SATURDAY, MARCH 29, 2008  
THE RITZ-CARLTON,  
HUNTINGTON HOTEL & SPA  
1404 SOUTH OAK KNOLL AVENUE  
PASADENA, CALIFORNIA 91106  
BOUTIQUE/SOCIAL HOUR 10:00 AM  
LUNCHEON 12:00 PM  
FASHION SHOW 1:30 PM  
DONATION \$85.00  
**For tickets Call: 626/355-3789**



# ԳՐԱԿԱՆ

## ՓՐԿԱՐԱՐ ՐԱՅՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Իրական կեանքից պատկեր պատահած 1997 թուականին թեհ-րանում:

Նոր տարւայ սեմին էր: Օրհասական օրեր էր ապրում 1996 թւականը, շուտով նա յանձնուելու էր պատմութեան գիրկը, չեմ իմանում, ո՞ր տեսակները ասեմ՝ լաւը թէ՛ վատը, երկուսից էլ կար, բայց լաւը գերակշռող էր, որովհետեւ լաւն է, որ աշխարհը պահում է քարը քարի վրայ:

Ձմեռ էր, դեռ ձիւն չէր եկել, սպասում էր ձեան գալուն, քանի որ ձիւնը առատութեան նշան է, երաշտի մտայնութիւնը փարատող:

Ձիւն չէր եկել, սակայն սառը քամին անարգելք փչում էր, աւելի զգալի էր քամու ուժգնութիւնը կտուրները վրայ եւ տափաստաններում, քան՝ փակուած վայրերում: Մառերը դադար չունէին, անընդհատ տարուբերում էին, երիտասարդ ծառերը կտորուելու աստիճան ծռւում էին, իսկ հաստաբունները անդրդուելի իրենց տեղերում անտարբեր քմծիծաղով քամու հարուածները հեռացնում էին, նրանք մատղաշ տարիքից շատ էին տեսել քամիներ ու հողմեր, այնպէս որ կոփուել ու փորձուել էին եւ անվրդով դիմադրում էին այդ քամիների գրոհներին:

Կիսամերկ ծառերի ճիւղերին թախծոտ տերեւները մտալուտ մահուան սարսուռից խարխափում էին, ճիւղեր էին թափում քամու զարկերին դիմանալու, բայց սին մարմանը, նրանք շուտ թէ ուշ ընկնելու էին, քանի որ սնուցանող մայր երակը անգորացել եւ քնով էր տարուել:

Թեհրանում ձմռան եղանակին են գալիս Ամանորը եւ Մ. Մնունդը: Բերքառատ տարին կանխագուշակում է նրանց ձիւնաբեր գալուստով:

Ձիւնը ուրախաբեր է, թէ՛ առաւել շքեղութիւն է պարգեւում Ամանորի եւ Մեսիայի Մննդեան սոնակատարութեան եւ թէ՛ երե-

խաները հրճուում են ձեան բամբակէ փաթիլները տեսնելով, որով նրանց մօտ իմաստաւորում է ձմեռ պապիի առեղծուածը՝

«Ձիւնի մէջէն արտոտալով կը համսիս,

Անցած լեռներդ վեհ Արագած ու Մասիս,

Գալուստդ ըլլայ շնորհաւոր ու բարի,

Իմ սիրելի երջանկաբեր նոր տարի»:

Այդուհանդերձ որ ձիւն չէր եկել, բայց սառնամանիքը պատել էր թեհրան քաղաքին: Երկինքը կապուտ պարզկայ էր, մտրակող քամին անխտիր զարկում էր իր ճամբին ծառացող ամէն մի բան: Երթեւեկող անհամար տարբեր տեսակի մակնիշի ինքնաշարժերից դուրս մղող ծուխը չէր յանդգնում թանձրանալ երկնակամարի վրայ, այլ քշւում էր դէպի հեռուները, դէպի անհաս վայրերը:

Կեանքը արատաւորող երեւոյթների դէմ եթէ գոռուելիւն եւ պայքար չլինի, նրանք պիտի խորանան եւ պատճառ դառնան անհանգստութեան, կտրուկ վճիռ է պէտք, ոնց երկնային տեղումները միանգամից եւ անխտիր սրբում եւ տանում են ապականիչ ծուխն ու թունաւոր գազերը:

Իրիկնապահ էր, անուժ արեւը իր բոտրագոյն շողերը հաւաքած, դարձած ամբողջովին հրէ գնդակ հասել էր արեւմտեան ծիրին, էն սարի գազաթին եւ յամբօրէն շրջւում էր անհետանալու աչքերից, քիչ յետոյ կարօտ թողնելով արեւելեան աշխարհի մարդկանց իր լոյսին ու ջերմութեան:

Հետզհետէ քաղաքը ողողում էր ելեկտրական լոյսերով: Բնակարանների վարագուրում պատուհաններից լոյս էր թափանցում, բեմի տպաւորութիւն թողնելով, թէ ինչ էր անցնում այդ օթեակներում, անվարան պիտի ասել կեանքի բազմաբնոյթ ծալքերն ու շերտերը: Շէնքերի կենդանութիւնը արտացոլում էր լուսամուտներից յայտնող փարոսանման լամբաներից:

Մըջիւնանման կեանքը շարունակում էր բանուկ վայրերում: Վաճառատները եւ խանութները շլացնող առատ լոյսերով լուսավառում էին: Տարբեր կողմերից հնչում էին ապրանքները գովաբանող կանչեր՝ «էստի՛ համեցէք, էստի՛ համեցէք»: Անցորդները հետաքրքրուած ներս էին մտնում պտղի, ուտեստեղէնի, հրուշակի, թխուածքի, տնային ապրանքների եւ խանութները, գննում, քննում, փորձում եւ արժէք հարցնում, որոշները դուրս էին ելնում կապոցներով ծանրաբեռնուած:

Գիշերը բաւական առաջացել էր: Արտեմը աշխատանքից նոր էր վերադառնում, նա յաւելեալ ժամեր էր աշխատում ընտանիքի ծախսերը հոգալու համար: Նա սովորութիւն ունէր լիքը ձեռքով տուն գնալ, ընտանիքը ակնկալիք ունէր տան էրիկից, նա ներս է մտնում իր ճանապարհի ծայրագլխին, տան մօտիկ, ծանօթ պարսիկ պտղավաճառի մօտ:

-Բարի երեկոյ աղայէ Ղօրբանի, ո՞նց ես, գործերդ ինչպէ՞ս են:

-Բարի երեկոյ մուսիօ, փառք Աստուծոյ. գոհ չլինեմ, ինչ եմ անելու, մի տեսակ յարմարում եմ:

-Ասա՛, տեսնեմ, դու ինչպէ՞ս ես, գործից հիմա ես գալի՞ս:

-Լաւ եմ, այո՛, հենց նոր եմ հասնում:

-էս ժամին գալդ ցոյց է տալիս, որ արտաժամեայ ես աշխատում:

-Ստիպուած եմ, ինչքան էլ գործում եմ, հազիւ եմ կարողանում էս պայմանների հետ եօլլա (յարմարուել) գնալ, դէ՛հ, որ չաշխատեմ, երեւակայիւր, ինչ կը լինի ընտանիքիս վիճակը, երկրում յեղափոխութիւն եղաւ, որ աւելի լաւ ապրենք եւ այդ յոյսով սպասում ենք:

-Իրաւացի ես, Աստուծոյ լաւ կը լինի, կեանքը փոխուել է, դժուարացել է, ուրախութիւնները քշացել եւ միջբարեկամական գնալգալը պակսել են:


-Գիտես ի՞նչ է պատճառը, թանկութիւնը եւ երկրի անորոշ տնտեսական վիճակը... Այդուամենայնիւ աշխատանքը շատ լաւ է, բանաստեղծն ասում է՝ գնա՛, աշխատի՛ր, մի՛ ասա, գործը ի՞նչ է, գործը յարատեւ դրամագլուխ է: Հայերը էս տեսակէտից աշխատասէր են, հմուտ եւ բարեխիղճ արհեստաւորներ շատ կան իրենց մէջ:

-Այո՛, աշխատանքը կեանք է, աշխատանքը մայրն է բոլոր յաջողութիւնների, այս բոլորից յետոյ

Մար. ք էջ 17

### Հ.Բ.Ը.Մ. ԴԱՐՈՒՀԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ - ՀՈԳԵՃԱՇ



### ՊՐՆ. ԱՐԱ ԹՈՓՃԵԱՆԻ

Մահուան տխուր առիթով Հովանաւորութեամբ՝ ՀԲԸՄԻ Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովի

### Նախագահութեամբ՝

### Յովնան Արք. Տէրտէրեանի

Առաջնորդ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի

### Հոգեհանգստեան Պաշտօնի

Տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 30, 2008 Փասատինայի Սբ. Գիրգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ յաւարտ Սբ. Պատարագի 2215 East Colorado Blvd., Pasadena, CA 91107 Յուշահանդէս - Հոգեճաշի ժամը 1:30in ՀԲԸՄԻ Ալեքս Մանուկեան կեդրոնի Պոյաճեան Սրահին մէջ 2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

### Ծանօթ՝

Պրն. Թովմեանի ի յիշատակ հիմնուած է մասնաւոր ֆոնտ մը՝ չքաւոր սաներու: Կը խնդրուի յիշատակի ձեր տուրքէ զերծ նուէրները ուղղարկել Սանուցի հասցէին:

AGBU TAROUHI HOVAGUIMIAN STUDENTS ASSOCIATION 2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**  
**Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն**  
**ՇԱՐՈՂ ԹԻԷՐԸ**

Մեծ Պարգել՝  
**2008 Lexus ES 350 թիւ 735**  
 Ա. Պարգել՝  
**Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան թիւ 497**  
 Բ. Պարգել՝  
**Laptop Համակարգիչ թիւ 557**  
 Գ. Պարգել՝  
**42" Plasma TV թիւ 575**

**Վիճակահանութիւնը տեղի ունեցաւ**  
**Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ին**  
**Verdugo Hills Country Club**  
**400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202**  
**Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի**  
**սոնակատարութեան առիթով**

**Պարգելները ստանալու համար հեռաձայնել՝**  
**(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029**



# HYE RIDERS-ՆԵՐՈՒՆ ԴՐԱՄԱՅԱԲԻ ԾԱՇԿԵՐՈՅԹԸ «ՀՐԱԿԻՆ ԾԱՂԻԿ ԿԵԱՆՔԸ ՓՐԿԵԼՈՒ ԾԱՄԲԻՆ...»



Բարեսիրական հաստատութիւնները կը գործեն ծառայութիւններ հայթայթելու համար կարօտեալներուն եւ անպաշտպաններուն, բարձրացնելով մարդկային արժանապատուութիւնը եւ պաշտպանելով ընկերային արդարութիւնը:

Այս հաստատութիւններէն մին է Hye Riders-ները որոնք Ուրբաթ երեկոյեան, Մարտ 8, 2008ին կազմակերպած էին ճաշկերոյթ մը որ տեղի ունեցաւ Pasadena քաղաքի Հայ Կեդրոնին մէջ:

Ճաշկերոյթին հիմնական նպատակը դրամահաւաք էր, հայ պատանի Հրակ Պէքէբեանի, որ նիւթականի խիստ կարիքն ունէր ժշկական դարմանումներու համար, Լիբանանի մէջ եւ ապա՝ Միացեալ Նահանգներու (Գալիֆորնիա)ի մէջ:

Կազմակերպութեան անունով բարի գալուստ մաղթեց ատենապետը Տիար Պերճ Գասպարեան որ իր խօսքին մէջ ողջունեց ներկաներն ու պատուոյ հիւրերը, այսպիսի մարդկային նպատակի մը պատճառով ներկայ գտնուելուն համար:

Սեղաններուն եւ սրահին գեղեցիկ զարդարանքը ակներեւ էր, ներկաները ճաշակեցին օրուան համադամ ճաշատեսակները, պատրաստուած «Աթլանթիս» ճաշարանին կողմէ, մինչ ունկնդրելով նուագի մեյքանոյշ հնչիւնները: Երեկոն խանդավառեց հիւր երգիչ Արա Սահակեանը եւ իրանահայ անուանի երգիչ՝ Andyն: Պարահարթակը միշտ լեցուն էր խանդավառ պարողներով հաճելի երաժշտութեան մէջ, Սեակի եւ իր խումբի ճոխ երգերու եւ պարեղանակներու հաւաքածոյով:

Խօսք առաւ նաեւ Հրակի մօրաքոյրը տիկին Մարինա Ռուհինեան, շնորհակալութիւն յայտնելով ներկաներուն նկարագրելով անոնց հաւատքի զօրութիւնն ու մարդասիրական ծառայասիրութեան ոգին որ բոլորին գերագոյն ուրախութիւնն է: Շնորհակալական խօսք ուղղեց բոլոր այն անդամներուն եւ անհատներուն որոնց յարատեւ քաջալերանքի եւ ներդրումի շնորհիւ է որ պիտի իրագործուի այս օգնութեան նպատակը:

Վիճակահանութեան դրուած էր գեղեցիկ motorcycle մը որ բարխաւորութեամբ փոքրիկն Դաւիթ Նովչեան:

Ներկաները մեկնեցան շնորհակալական եւ քաջալերական մաղթանքներով այս ակումբին բոլոր անդամներուն եւ բոլոր անոնց

որոնց աշխատանքին ու անխոնջ ջանքերուն շնորհիւ յաջողեցաւ սոյն ձեռնարկը:

Մեր բաժինն է, գոհողութիւնը, պարտինք մեր տուրքը տալ որպէսզի կեանքի յոյս տանք փոքրիկն Հրակին ինքնամոռաց եւ անբողջանուէր մարդասիրական զգացումներով: Որովհետեւ կարեւորը տալն է եւ ոչ միայն ըլլալը, էականը ցանկն է եւ ոչ միայն ամբարելը: Ուրեմն եկէ՛ք բոլորս օգնենք անոր, իւրաքանչիւրս իր լուծման տալով, մեր յոյսն ու հաւատքը գործի վերածելով:

\*\*\*\*

Որո՞նք են Hye Riders-ները: Hye Riders-ները motorcycle-ներու ակումբ մըն է հիմնուած 1999ին, ատենապետութեամբ Պերճ Գասպարեանի անխոնջ ջանքերուն եւ փափաքներու շնորհիւ, իսկ փոխատենապետութեամբ՝ Գրիգոր Կարապետեանի: Ակումբը կազմուած է իրար մօտ պահպանելու հայ երիտասարդութիւնը, որոնք ունին կամ կը վարեն motorcycle-ներ: Երբ նոր հիմնուեցաւ սոյն ակումբը, ունէր միայն 3 անդամներ 1999ին: Այսօր, անդամներուն թիւը բարձրացած է 40-ի եւ յոյսով են որ վերոյիշեալ թիւը հետզհետէ բարձրանայ: Կան անդամներ Հարաւային Ամերիկայէն մինչեւ Հիւսիսային Ամերիկա: Մօտ ատենէն մասնաճիւղեր պիտի բացուին Սան Ֆրանսիսքոյի, Սան Տիէկոյի եւ նոյնիսկ Մեքսիքոյի մէջ: Աստիճանաբար, Hye Riders-ները պիտի բազմանան ամբողջ քաղաքներուն մէջ:

Անոնց բուն նպատակակէտն է իրար միանալով օգնել տարեցներուն, կարիքաւորներուն եւ աշխատիլ հայ համայնքին հետ: Անոնք կը կազմակերպեն ձեռնարկներ, կը հաւաքեն նուիրատուութիւններ եւ տարին անգամ մը կը կատարեն խաղալիքներու հաւաք (Toy run), օգնելու համար Հայաստանի փոքրիկներուն:

Իսկապէս որ քաջալերելի է Hye Riders-ներու այս մարդասիրական ձեռնարկներն ու գոհողութիւնները:

GO HYE RIDERS GO !!!!

\*\*\*\*

Անոնք որոնք կը փափաքին նուիրատուութիւններ կատարել կրնան ուղարկել հետեւեալ հասցէին:

Hrag Bekerian Foundation  
HYE RIDERS M/C CLUB  
A non-profit organization  
731 E. Washington Blvd.  
Pasadena, CA 91104

# ՈՒՐՈՒՈՒԷՅ ՈՎԱՍՆՆԱ ԱԳԻՐՄԱՅԵԱՆ ԿԱԿՈՍԵԱՆ ՄԱՅՐԻԿԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿԸ



Ովասննա Մայրիկ եւ Տիէկո Գարամանուգեան

Ուրուգուէյի հայ համայնքում, Կանանց Միջազգային Օրը նշանաւորուեցաւ իւրայատուկ իրադարձութեամբ:

Հայկական ծերանոցում բնակուող Ովասննա Ագիրմայեան Կակոսեան Մայրիկը այդ օրը բոլորեց իր ծննդեան 100 ամեակը: Նրան այցելել են հոգեւոր առաջնորդներ, ազգականներ եւ բարեկամներ: Ձերմ մթնոլորտում տեղի է ունեցել հիւրասիրութիւն եւ հայ երաժշտութեան ներքոյ Ովասննա Մայրիկ պարեց իր հասակակից ընկեր ընկերուհիների հետ:

Ջրուցելով Արաքս Ռատիոյի տնօրէն Տիէկո Գարամանուգեանի հետ, Ովասննա Մայրիկը յիշեց «ծնեմ հաճընի մէջ, 7 տարեկանին որպէս գաղթական ելանք, Տէր Զօրի մէջ կորսնցուցի ծնողներս, ատոր պատճառով պզտիկ եղբօրս հետ մտանք ՀԲԸՄ-ի որբանոցը եւ հոն սորվեցանք: Ապա ամուսնացայ Փանոս Կակոսեանին հետ: Ջարդի պատճառով տեղափոխուեցանք Քիրքուք եւ Մոսուլ իրաքին մէջ յետոյ անցանք Պէյրութ: Եղբայրս կը պատմէր որ երբ կ'աշխատէր հացի գործարանին մէջ տեսաւ որ շուն մը եկաւ որ վիզի մէջ թուղթ ունէր որ կ'ըսէր շուտ դուրս ելլէք այստեղէն հայերուն պիտի մորթեն»:

Իր պատգամ փոխանցելով երիտասարդութեանը, ցեղասպանութեան 100 ամեայ վերապրող մայրիկը նշեց, «Կը փափաքիմ որ նոր սերունդները ըլլան հայասէր եւ պահեն հայ լեզուն»:

**MELODY INTERNATIONAL  
MUSIC SCHOOL Inc.  
ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Join Our New Music School in Pasadena  
By Experienced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar,  
Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all  
ages and levels

Professional Digital Recording studio  
for all your audio recording needs

**1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104**  
**Phones: (626) 797-8867 & (818) 599-1606**  
and  
**334 N. Central Avenue Unit 202**  
**Glendale, CA 91203**  
**Phones: (818) 244-8244 & (818) 599-1606**  
Visit us at: [www.musiclessons4u.com](http://www.musiclessons4u.com)



### ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԾԿԵՐՈՅԹԸ

Մարտնակուած էջ 13-էն

Պրն. Փիթըր Ղուկասեան՝ AMAA-ի փոխ նախագահը, որ չի ընդ թէ ինչպէս իր մեծ հօր ստացած ուսումն ու երաժշտական պատրաստութիւնը փոխանցուած էր իր հօրը, իրեն եւ այժմ իր գաւկիին:

Վարժարանի տնօրէն՝ Պրն. Յովսէփ Ինճէճիքեան, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկը յաջողցնող յանձնախումբին եւ զօրավիգ հանդիսացող նուիրատուներուն, ներկաներուն ու յատուկ յարգանքով չի ընդ նուիրեալ հիմնադիրներէն մին՝ Տիկ. Ալիս Հայկը: Ան նշեց որ մեր նախահայրերը գիտակից էին հոգեւոր կեանքի ու դաստիարակութեան, միշտ եկեղեցիներուն կողքին դպրոց բարձրացնելով: «Այսօր կը վկայենք որ Մերտինեան վարժարանը այդ աւանդը կը շարունակէ 26 տարիներէ ի վեր: Մեր շրջանաւարտները լաւագոյն ապացոյցն են համալսարաններու մէջ իրենց յաջողութիւններով ու նկարագրով»:

Այնուհետեւ Պրն. Ինճէճիքեան ներկայացուց օրուան պատուոյ մեծարեալը՝ Տիկ. Աշխէն Իսքէնճեանը, որ 25 տարիներէ ի վեր անձնուիրաբար ծառայած է ու կը շարունակէ ծառայել Մերտինեան վարժարանի մէջ նոյն թափով՝ որպէս Հայ Լեզուի ու Հայոց Պատմութեան դասատու: Ան՝ Տիկ. Իսքէնճեանը ներկայացուց չորս կէտերու մէջ՝ հմուտ հայագէտ, հայ մշակոյթին ու հայ դպրոցին նուիրեալ մշակ մը, եւ սիրալիր յարաբերութիւն ունեցող գործակիցներուն, ծնողներուն եւ աշակերտներուն հետ: Երբ 25 տարիներ առաջ, տակաւին հայերէն լեզուի ու հայոց պատմութեան դասագիրքերը հագուագիւտ էին, Տիկ. Իսքէնճեան պատրաստեց շարք մը, որ կը գործածուէր ու տակաւին կը գործածուի Մերտինեան վարժարանի մէջ ու կարգ մը այլ դպրոցներու մէջ: Որպէս Հայկական Բաժանմունքի ատենապետուհի, ան զարկ տուած է հայ մշակոյթին՝ յատուկ յայտագիրներով ու աշակերտներուն սիրցուցած մեր մայրենին ու մեր պատմութիւնը, այդ սէրը միշտ կը վկայեն իր նախկին ու նոր աշակերտները:

Պրն. Ինճէճիքեան, հուսկ, հրաւիրեց մեծարեալը ու ներկաներու յոտնկայ ծափահարութիւններու տակ, Տօքթ. Աթիքեան Տիկ. Իսքէնճեանին յանձնեց հոգաբարձութեան գնահատանքի յուշատախտակը, նաեւ նուէր մը՝ ոսկի ապարանջան՝ վրան իր ու դպրոցին անուններով:

Իր խօսքին մէջ Տիկ. Իսքէնճեան շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած մեծարանքին ու յուզումը դժուար գապելով, սիրագեղելոյթ ունեցաւ: Յիշեց իր մէջ սորվեցնելու սէր արթնցնող ուսուցիչ մայրն ու մօրաքոյրը, զինք հայ մշակոյթով ներշնչող եւ ուսուցչութեան նուիրուելու ձգտումը արթնցնող ուսուցիչը բանաստեղծ Մուշեղ Իշխանը: Շնորհակալութիւն յայտնեց իր գաւակերուն, ընտանիքին, բայց մանաւանդ Մերտինեանի հոգաբարձութեան, տնօրէններուն, գործակիցներուն ու աշակերտներուն: Այս վերջիններուն ակնարկելով, ըսաւ. «Եթէ ջնջին ազդեցութիւն մը ունեցայ աշակերտներու վրայ՝ այդ իմ վարձատրութիւնս է»:

Անակնկալ էր նախկին Մերտինեանցի Կրէկ Մարթանեանի ելոյթը, որ վկայեց Տիկ. Իսքէնճեանին իր ստացած տպաւորութիւնները: Ուրիշ անակնկալ մը ըրաւ Արմէն Գըվըրեանը, դարձեալ նախկին շրջանաւարտ մը, որ տուտուկի վրայ հայկական եղանակ մը նուագելով, գայն նուիրեց իր սիրելի ուսուցիչին:

Գեղարուեստական յայտագրին իր բաժինը բերաւ նաեւ Լարք Երաժշտանոցի Կանանց Երգչախումբը, ղեկավարութեամբ Պրն. Վաչէ Պարսումեանի, հայկական ժողովրդական երգերու փունջով մը:

Յայտագրին փակման խօսքը կատարեց Տօքթ. Տարագճեան, շնորհաւորելով մեծարեալները եւ գնահատելով ձեռնարկին յաջողութեան համար աշխատողները, ինչպէս նաեւ դպրոցին նոր ծրագիրներուն համար սրտաբուխ նուրաստութիւն ընող բոլոր անհատները: Այս առթիւ գոյացաւ շուրջ 250 հազար տոլար:

Վեր. Բան Թովմասեանի աղօթքով վերջ գտաւ այս շքեղ հանդիսութիւնը:

### ՓՐԿԱՐԱՐ ԸԱՅՆ

Մարտնակուած էջ 15-էն

ընտիր պտուղ ի՞նչ ունես.

- Կայ, բայց թանկ է, որ այդպէս է, քիչ կը տանեմ:

Աղայէ Ղորբանին երկար տարիներ էր, Հեշմարթիէի կենտրոնական պողոտայի վրայ խանութ ունէր, բարեխիղճ եւ Աստուածավախ մարդ էր:

Պտղավաճառը պտուղները տոպրակելիս մտքին մի նոր բան է հասնում, մոռացկոտ մարդու պէս վազ առանց Արտեմին Նայելով արտաբերում է մտածածը.

-Մուսիօ, ենթադրում եմ ձեր ժանկիէն (ամանոր) մօտիկ է, չէ՞, պէտք է պատրաստուեմ:

-Ճիշտ ես, մի քանի օրեր ակելի չեն մնացել:

-Ուրեմն մեծ քանակով պտուղ պիտի բերեմ, քանի որ իմ յաճախորդների մեծամասնութիւնը հայեր են:

Արտեմը դրամը վճարում է, կապոցները ձեռքին բարի գիշեր ասելով դէպի տուն է ուղղում շտապ քայլերով: Նա վայրկեան առաջ կ'ուզէր տանը լինել, մանչուկներին գրկել եւ սիրել, ամբողջ օրը նրանցից հեռու սիրտը թրպտում էր նրանց համար: Արտեմի տունը գտնուում էր Հեշմարթիէ քաղաքամասի նեղ փողոցներից մէկում, շէնքի երկրորդ յարկում: Նա այս անգամ բանալիով չի բացում մուտքի դուռը, այլ գանգահարում է, տնեցիների համար անսովոր է թւում գանգի ձայնը.

-Ո՞վ պիտի լինի էս ժամին, գուցէ անծանօթ մէկն է, մտածում են նրանք:

Նրանց գլխից երկմտանքի մտքեր են անցնում, ակնդէտ սպասում են: Արտեմի կիրք պատուհանից ստուգում է, - Արտեմն է, բարկացած կանչում է.

-Միթէ՞բալնիք չունես, որ երկար էլ գանգում ես...

Դուռը բացում է, Արտեմը արագ վեր է բարձրանում սանդուխտներից եւ մտնում յարկաբաժին: Նա երկար աշխատանքից յոգնած, բայց ջանում է ժպտուն երես եւ առոյգ երեւալ.

-Բարի երեկոյ Ռիմա, ա՛ռ այս կապոցները:

Արտեմի ներկայութիւնը տնեցիներին ուրախացնում է, երեխաները ճուղղուն բարձրացնելով վագում են հօր գիրկը: Արտեմը հրճուանքից թեւերը օղակած նրանց սեղմում է սրտին եւ ջերմ համբոյրներով ողողում նրանց թմբլիկ այտերը ասելով.

-Բարի երեկոյ Անդրէ ջան, բարի երեկոյ Սաքօ ջան, իմ ազիզ բալէքս:

Նրանց իր տաքուկ դուշաղում (գիրկ) սեղմած մօտենում է հօրն ու մօրը, խոնարհութեամբ բարեւում է նրանց ասելով.

-Ո՞նց ես հայրիկ ջան, դու ո՞նց ես մայրիկ ջան, ընթրե՞լ էք:

-Ոչինչ բալէս, մենք շուտ ենք հաց ուտում, ուշ ժամին ուտելը մեզ վնաս է, պատասխանում է Սառան:

\*\*\*

Յովհաննէսը եւ Սառան ամէն անգամ տղային գործից վերադառնալիս տեսնելով ձեռքները երկինք պարզած գոհութիւն են յայտնում Բարձրեալին, որ նա ողջ եւ առողջ է: Նրանք իրենց հանապազօրեայ արթութիւններով Արտեմի համար գործի յաջողութիւն են մաղթում, որպէսզի կարողանայ իր ընտանիքի կեանքը առօր-փառօք տնօրինել

եւ իրենց ծերութեան ապաւէն լինի, քանի որ Արտեմը իրենց մինուտներն է, միակ յոյսն է, իրենց պահողն ու թաղողը: Նրանք մինչեւ իրենց որդու գալը չեն քնում, աչքերը յառած դրան անձկութեամբ սպասում են, ամէն մի թրիկոց, ամէն մի շարժում նրանց ուշադրութիւնն է գրաւում, որդու գալը մտքից փարատում է ամէն տեսակ խառը մտածում: Ա՛խր, նրանք սրտածմլիկ դառը յուշեր ունեն իրենց երկու ողբացեալ տղաների մահուան գուժից, թէ ինչպէս գաւակների մահը տեղեկացում է յանկարծակի առանց նախաբանի, այդու սրտները վախ է ընկել:

Յովհաննէսին եւ Սառային վաղահաս ծերութիւն էր պատել՝ ձիւնաթոյր մագերով, կըրած մէջքով, խորշոմած դէմքով, թառամած ու մաշուած:

Բարտի անիւր հակառակ էր պտուղել, անողորմ հարուածներ հասցնելով նրանց: Արտեմից մեծ տղաները ջահէլ-ջիվան տարիքում, դեռ չամուսնացած, իրարից մի տարի տարբերութեամբ վաղամեռիկ կեանք են ունենում, մէկը հիւանդութեամբ, միւսը մեքենայի արկածով: Ինչ դժնդակ օրեր էին, արեւը մթնել էր Յովհաննէսի եւ Սառայի աչքերում, երկու առանձին կորուստները նրանց մատնել էին խոր կսկիծի:

Հինգ տարի էր անցնում ծնողաց սրտերը մորմոքող տղաների մահուանից, սակայն անթեղուած կրակի նման միտում էր վէրքն անբուժելի: Նրանք ժամանակ ու անժամանակ անցեալի յուշերի մէջ ընկղմուած վերջիւսում էին գաւակների կեանքից դրուագներ: Արտեմի մէկ արարքը թարմացնում էր ողբացեալ տղաների յիշատակը, թէ ինչպէս նա նրանց նման իր առաջին աշխատանքի երախայրիքով նուէր էր գնել եւ ուրախ ու ժպտուն յանձնել իրենց, ի՞նչ երջանիկ պահ, ի՞նչ ծնողասէր հոգեբանութիւն: Երբ սթափուում էին, խոր հոգոց էին արձակում եւ անիծում էին իրենց բախտը աչքները ճմրթելով, հագիւ մի քանի արտասուք էր գլորում փոս ընկած աչքերից: Այնքան լացել էին այդ աչքերը, որ ցամքած աղբիւր էին դարձել: Առաւելաբար Սառան էր ձայնով ա՛խ ու վա՛խ քաշում՝ սրտածմլիկ բառեր հեկեկալով.

-էս ինչ ցաւ էր մեր դուշաղը (մատնուած, ենթարկւած) էլաւ, էդ ա մենք պտի մեռնինք նրանց տեղը, ոչ թէ իմ շարժող բալէքս: Մենք մեր օր ու արեւը արել ինք, մեր կեանքը ապրել, նրանք յոյսեր ունին, մուրագներ ունին շատ: էս ինչ դառը ճակատագիր էր, որ մեզ հանդիպեց, օ՛հ, ծնողը չպիտի իր գաւակի մահը տեսնի, գաւակի կորուստը ծանր է ու անդարման:

Այդուհանդերձ նրանք դեռ բոլորովին չէին անգօրացել եւ նստակեաց դարձել, կարողանում էին իրենց վարք ու դիրքը պաշտպանել: Անվրէպ կիրակի եւ տօնական օրերը եկեղեցի էին գնում, սրտաբուխ աղօթում էին տառապող սրտերի մխիթարութեան համար:

Նրանց առօրեայ քաղցր զբաղմունքն էր թոռներին պահել եւ զբօսանքի տանելը, թոռները նրանց համար հոգեկան մխիթարանք եւ բերկրանք էին: Նրանք այս տեսակ օգտակար էին լինում հարսին, որպէսզի նա շատ չձանրաբեռնուի նաեւ երեխաների հսկողութեամբ:

(Մարտնակելի 1)

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax :-----



ՄԱՐՁԱԿԱՆ

Հ. Բ. Ը. Մ - Հ.Ե.Ը.Ի ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Հ.Բ.Ը. Մ իրութեան, Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան կազմակերպած Պասկեթպոլի մրցաշարք, Փոքրերու, Պատանիներու եւ Մեծահասակներու խումբերու միջեւ, մասնակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.-ի, Հ.Մ.Մ.-ի, Հ.Մ.Ը.Մ.-ի, Սփորթսմանի, Յովսէփեան Վարժարանի, Արշակ Տիգրանեան Վարժարանի, Սահակ Մերոպ Վարժարանի եւ Փասատինայի Եղբայրութեան տղոց եւ աղջիկներու խումբերու միջեւ:

Սեպտեմբեր 29, 2007ին եզրափակիչ մրցումներուն՝ յաղթական խումբերը արժանացան համապատասխան՝ առաջին եւ երկրորդ պատուաբեր բաժակներուն:

Եզրափակիչ խաղերուն յաղթողներն էին.

Տղաք 8-10 տարեկան

Սփորթսման-Փասատինա

առաջին

Հ.Բ.Ը.Մ.-Փասատինա

երկրորդ

Տղաք 12-14 տարեկան

Սփորթսման-Լոս Անճելոս

Առաջին

Հ.Բ.Ը.Մ.- Փասատինա

երկրորդ

Տղաք 16-18 տարեկան

Յովսէփեան Վարժարան

Առաջին

Հ.Բ.Ը.Մ.- Փասատինա

երկրորդ

Մեծահասակներ

Հ.Բ.Ը.Մ.-Կլէնտէյլ

Առաջին

Հ.Բ.Ը.Մ.-Փասատինա

երկրորդ

Երկուշաբթի, Հոկտեմբեր 29, 2007ին սկսած երկրորդ մրցաշարքը եւ քառասուն խումբերու միջեւ եղած մրցաշարքը, Դեկտեմբեր ամսուան տօնական օրերու բերումով, կարճ դադարէ մը ետք շարունակուելով վերջ գտաւ Փետրուար 9, 2008ին կայացած եզրափակիչ մրցումներուն խանդավառ եւ ջերմ մթնոլորտի մէջ:

Յաղթական խումբերն էին...:

Մեծահասակներ տղաք

Առաջին

Հ.Բ.Ը.Մ.-Փասատինա

երկրորդ

Հ.Բ.Ը.Մ.-Կլէնտէյլ

14-16 տարեկան տղաք

Հ.Բ.Ը.Մ. Հայ Սքուլ-Փասատինա

Առաջին

Սահակ Մերոպ Երկրդ. Վարժարան

երկրորդ

10-14 տարեկան տղաք

Յովսէփեան Վարժարան

Առաջին

Սփորթսման

երկրորդ

10-16 տարեկան աղջիկներ

Սահակ Մերոպ

Առաջին

Սահակ Մերոպ

երկրորդ

8-10 տարեկան տղաք

Սփորթսման-Փասատինա

Առաջին

Հ.Բ.Ը.Մ.-Փասատինա

երկրորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐՆ ԱՐԴԵՆ ՆՈՒԱՃԵԼ ԵՆ 4 ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Հայաստանի բոնցքամարտիկներն արդէն նուաճել են 4 օլիմպիական ուղեգիր, ինչը դեռ վերջնական ցուցանիշ չէ: Ինչպէս «Արմենայրես»-ին այսօր ասել է ՀՀ բոնցքամարտի հաւաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայէլ Մեհրաբեանը, Ապրիլին Աթէնքում կայանալիք վերջին օլիմպիական վարկանիշային մրցաշարում նրանք կը պայքարեն եւս 1-2 ուղեգրի համար:

Նրա խօսքով, Հունաստանում կայանալիք մրցաշարը վերջին հնարաւորութիւնն է Եւրոպական բոնցքամարտիկների համար՝ նուաճելու Փեքինի օլիմպիադայի ուղեգիր: Իսկ դա նշանակում է, որ 25 ուղեգրերի համար Աթէնքում սուր մրցակցութիւն կը ծաւալուի:

Ըստ Ռ. Մեհրաբեանի՝ օլիմպիական խաղերի մասնակից իւրաքանչիւր հայ բոնցքամարտիկ պէտք է 12 մրցամարտ անցկացնի, ինչը բաւարար է Փեքինի խաղերին լաւագոյնս նախապատրաստուելու համար:

Ի դէպ, վարչապետ Մարտի 11-15-ը կայացած լեհական բոնցքամարտի լեգենդար մարզիչ Ֆելիքս Շթամի միջազգային յուշամրցաշարի յաղթող է դարձել Հայաստանի բոնցքամարտիկ, 64կգ քաշային Հրաչեայ Զաւարեանը՝ տանելով 3 յաղթանակ՝ շուէդ, հունգարացի եւ եզրափակիչում՝ բելառուս մարզիկների նկատմամբ:

Հայաստանի միւս ներկայացուցիչ՝ 48 կգ քաշային Յովհաննէս Դանիէլեանը, տանելով 2 յաղթանակ միայն եզրափակիչում միաւորների աննշան տարբերութեամբ զիջել է լեհ մրցակցին եւ զբաղեցրեց 2-րդ տեղը:

Մրցաշարին մասնակցել են 15 երկրների բոնցքամարտիկներ: Հայաստանի թիմի գլխավոր մարզիչն է Ռաֆայէլ Մեհրաբեանը:

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400

\*\*\*\*\*

The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day

7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՇԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ CHARTER CABLE 26-ՐԴ ԵՒ 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԶՐԵՍԵՆՅԱ)

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ

Ամէն Կիրակի երեկոյեան Ժամը 10:00-ից 12:00

Կլէնտէյլի 26-րդ կայանից

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

- Ապրիլ 5 Spanish Night
Ապրիլ 26 Las Vegas Trip
Մայիս 11 Մայրերու Օրուայ նախաճաշ
Յունիս 14 Հայրերու Օր
Օգոստոս 10 Հանգանակային ճաշկերոյթ «Մասիս» շաբաթաթերթի
Հոկտեմբեր 4 Հ.Մ.Ս.ի Տարեկան Պարահանդես
Դեկտեմբեր 31 Նոր Տարուայ խորխոճանք

International Academy of Los Angeles Presents An Evening Honoring Composer, Director & Pioneer of Armenian Television SARKY MOURADIAN Manuel Kevin George Chuko Andre Danik Narine Shahbazian Salpi Mayelian Hovik Krikorian Harut Hakopian Jenny Armen Flora Martirosian Adiss Harmandyan Vatche Hovik Grigorian Levon Sevan Maxim Raffi Khardalian Razmik Mansourian Armen Aloyan Hosts: Anahit Martirosian, Aramayis Gharibyan, Nouna Serobian Thursday, April 10, 2008, 7:30 p.m. ALEX THEATER 216 North Brand Blvd., Glendale, California 91203 FOR TICKETS CALL: (818) 913-2299 (818) 265-0506

FOR INFORMATION CALL: (818) 243-8722



### ԿՈՉ՝ ԱՐԴԱՐԱՄԻՏ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՍԵՐ ԸԱՅՈՒԹԵԱՆ

Շարունակում էք 5-էն

նին ու յատկապէս Մարտ 1-ի դէպքը:

Մենք կ'ըսենք. Ի՞նչ կ'ուզէիք որ ընէին օրը ցերեկով անարդար-ուածները իրենց իսկ պետութեան կողմէ: Միջազգային փորձառութեան մէջ ասիկա ո'չ առաջին դէպքն է, ոչ ալ վերջինը, երբ կազմակերպութիւններ կը դիմեն միջազգային արդարադատութեան կամ համապատասխան մարմիններու, որպէսզի ըստ հնարաւորինս արդար հետաքննութիւններ կատարուին ու գնահատուծ ստանան հայրդիներու խնդրանքները: Օրինակներ չեն պակասիր. դեռ բոլորովին վերջերս Փաքիստանի նախագահական ընտրութեան նախօրէին, նախագահական թեկնածու Պենագիր Պհոթի օրը ցերեկով անարդարութեան հետաքննութեան առթիւ ընդդիմադրութիւնը դիմեց Անգլիոյ Սքոթլանտ Եարտին:

Ասոր մէջ վախճալու եւ կամ զգուշանակու ի՞նչ կայ: Միջազգային հանրութեան համապատասխան մարմիններուն դիմելու հակառակ գտնուող իշխանամէտ ու գերզգայուն մեր հայրենակիցներուն առարկութիւնները չեն ար-

դարացուիր, երբ ո'չ մէկ վստահութիւն մնացած է այլապէս պետութեան անաչառութեան հանդէպ:

Անոնք կը հրամայեն զանազան ենթադրեալ անպատեհութիւններ որ իբր այդ օտար մարմինները եւ անոնց ետին կեցող պետութիւնները իրենց քիթը խոթած պիտի ըլլան Հայաստան աշխարհի գործերուն, պիտի օգտագործեն ընդհեռուած առիթը եւ Հայաստանը պիտի դնեն նեղ կացութեան մէջ: Գող, սիրտը դող: Ինչո՞ւ կը վախնան մեր հայրենակիցները արդար ու անաչառ գնահատումներէն:

Այսօրուան իշխանութիւնները եւ անոնց պարագլուխները դժբախտաբար այլեւս ո'չ մէկ յոյս կը ներշնչեն մեզի. մենք այլեւս չենք հաւատար անոնց երկարած ձիթենիի ճիւղերուն: Հասցուած վնասը անվերականգնելի է եւ Աստուած հեռու ընէ այս ազգը նոր վտանգներէ, որոնց պատասխանատուութիւնը կ'իջնայ այս վարչակարգին ու անոր հայրենական թէ սփիւռքեան համախոհներուն վրայ: Կայ միայն մէկ լուծում՝ խարդախութեամբ «ընտրուածները» պէտք է հեռանան քաղաքական հրապարակէն՝ մեծ ներողութիւն մը պարտական մնալով այս ազգին:

### ԸԱՅԱՍՏԱՆԻ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԱԹՈՈՒ

Շարունակում էք 6-էն

կամքին հակառակ է:

Կեանքի եւ գործի մէջ՝ միշտ կայ հրաշալի մեկնում մը, ձեր բռնած ներկայ պաշտօններէն ձեր հրաժարումն ու հեռացումը եւս պիտի ըլլայ հրաշալի մեկնում մը:

Յար եւ նման այն մեկնումին, որ տարիներ առաջ կատարեց Համաշխարհային Բ. Պատերազմի Անգլիոյ համար յաղթանակը շահող մեծագոյն դէմքի մը՝ Ուինսթըն Չըրչիլի:

Ուինսթըն Չըրչիլ կը վարէր Անգլիոյ մեծագոյն եւ կարեւորագոյն պաշտօնը. վարչապետն էր երկրին:

Պատերազմի յաղթանակէն ետք, երբ ան նկատեց որ իրեն դէմ դժգոհութիւն կայ, երկար չպսպասեց, բիրտ միջոցներու չդիմեց եւ ոչ ալ բանակի միջամտութիւնը խնդրեց:

Անմիջապէս ան իր հրաժարականը գրեց. յանձնեց գայն թագուհիին՝ որ այն տարիներին իր աղջկան տարիքը ունէր: Անոր ձեռքը համբուրեց եւ մեկնեցաւ,

հեռացաւ իր պաշտօնէն:

Իր այս ընթացքով ան եղաւ եւ կը մնայ որպէս Անգլիոյ մեծագոյն դէմքերէն մէկը:

Հրաշալի մեկնում մըն էր՝ այդ իր արարքը:

Այսու կոչ կ'ընենք ձեր ազնուութեան, մեծայարգ տիարք, Ռոբերտ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան որ դուք եւս ճիշտ այսպէս մեկնիք հրաշալիօրէն: Հրաժարիք եւ հեռանաք ձեր պաշտօններէն:

Մեր այս կոչն ու խնդրանքը կը ներկայացնենք ձեզ առանց քինախնդրութեան եւ ատելութեան, ընդհակառակը կը խնդրենք, սիրով եւ յարգանքով յանուն մեր հայրենի ժողովուրդի, խաղաղութեան, բարօրութեան եւ յանուն մեր հայրենիքի բարգաւաճումին:

Կը խնդրենք որ հրաշալիօրէն մեկնիք, հրաժարիք ձեր պաշտօններէն եւ դառնաք ու մնաք միշտ յարգարժան դէմքեր Հայրենիքի համար:

Ի դիմաց՝  
Լոս Անճելոսի խումբ մը մտաւորականներու, գրողներու, խմբագիրներու եւ ազգայիններու:

**ՇՆՈՐԸԱԽՈՐԱՆՔ**

Տէր եւ Տիկ. Ժագ եւ Արմինէ Գալանճեանի առջինեկ աղջիկ զաւակով մը բախտաւորուելու ուրախ առիթով, որ անուանած են Իզապէլ, Թէքսաս նահանգէն Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի եւ որդին Ալէք Օհանեաններ կը շնորհակարան ընտանեկան պարագաները, յատկապէս նորածինի մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեանները:

Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

**ԲԱՑՈՒԱԾ Է**

Հիպնոսաբուժութեան կեդրոն  
դեկավարութեամբ՝  
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի  
Փասատիմայի մէջ  
Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն  
մինչեւ կ.ե. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104  
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ  
«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ  
կը դարմանուին.

- Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալոլ, թմրադեղեր, եւայլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկնուածութիւն, վախ, անհանգստութիւն, եւայլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէգ, եղունգի կրծում, եւայլն:
- Ուսումնական եւ սրբօրային բարելաւում

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)**

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA  
ԸԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

**Palm Springs**

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ՅԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակաբաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռածայնել՝  
**(818) 246-0125**



**Merrill Lynch**  
INVESTMENT BANKING

**JACK KALANJIAN**  
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena  
225 So. Lake Avenue  
Pasadena, CA 91101  
(626) 396-2825 Direct  
(626) 376-4665 Fax  
jack\_kalanjian@ml.com

“Helping the Armenian Community Build Wealth”

Չեր Ծանուցումները Վստահեցեք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net



# Mission Liquor & Wines

<b>Jean Marc XO</b> Vodka <b>34<sup>99</sup></b> 	<b>Absolut</b> Vodka <b>13<sup>99</sup></b> 	<b>Grey Goose</b> Vodka <b>20<sup>99</sup></b> 	<b>Johnnie Walker</b> Black Label <b>19<sup>49</sup></b> 750ml <b>47<sup>99</sup></b> 1.75L 	<b>Hennessy</b> Cognac <b>20<sup>99</sup></b> vs <b>31<sup>99</sup></b> vsOP 
<b>Meukow VS</b> Cognac <b>15<sup>99</sup></b> 	<b>El Massaya</b> Arak <b>20<sup>99</sup></b> 	<b>Ketel One</b> Vodka <b>17<sup>99</sup></b> 	<b>Courvoisier VS</b> Cognac <b>17<sup>99</sup></b> 	<b>Skyy</b> Vodka <b>9<sup>99</sup></b> 750ml <b>20<sup>99</sup></b> 1.75L 
	<b>Hennessy XO</b> Cognac <b>99<sup>99</sup></b> 	<b>Crown Royal</b> Canadian Whisky <b>14<sup>99</sup></b> 	<b>Cîroc</b> Vodka <b>17<sup>99</sup></b> 	<b>Tres Generaciones</b> Silver Tequila <b>21<sup>99</sup></b> 

## Vodka Specials

Ora Product of France.....	\$11.99
Stolichnaya Elit.....	\$42.99
Putinka.....	\$10.99
Moskovskaya.....	\$6.49
Absolut.....	\$13.99
Skyy.....	\$9.99 750ml \$20.99 1.75L
Imperia.....	\$17.99
Stolichnaya.....	\$21.99 1.75L
Imperial Collection.....	\$24.99
Czar's Gold Product of Russia.....	\$14.99
Reyka Product of Iceland.....	\$19.99
Cristall.....	\$9.99
Smirnoff.....	\$8.99
Vox Vodka.....	\$17.99
Skyy 90.....	\$24.99
Smirnoff.....	\$15.99 1.75L
Stolichnaya.....	\$15.99
Grey Goose.....	\$49.99 1.75L
Patriot Product of France.....	\$12.99

## Brandy/Cognac Specials

Le Cartier Napoleon VSOP.....	\$7.99
Armenia 3 Yrs.....	\$9.99
Hennessy VS.....	\$20.99
Mesrob Mashtots 25 Yrs.....	\$29.99
Courvoisier VS.....	\$17.99
Courvoisier XO.....	\$79.99
Remy VSOP.....	\$32.99
Remy XO.....	\$104.99
Martell XO.....	\$99.99
Bossard XO.....	\$17.99
Hennessy Paradis.....	\$249.99

## Rum/Gin Specials

Tanqueray Gin.....	\$16.99
Beefeater Gin.....	\$22.99 1.75L
Bacardi Rum (Light or Dark).....	\$16.99 1.75L
Bacardi Rum (Light or Dark).....	\$9.99
Captain Morgan.....	\$18.99 1.75L
Captain Morgan.....	\$11.99
Bombay Sapphire Gin.....	\$29.99 1.75L

## Scotch Whisky Specials

Dewar's 12 Yrs.....	\$17.99
Dewar's White Label.....	\$26.99 1.75L
Chivas Regal 12 Yrs.....	\$17.49
Chivas Regal 12 Yrs.....	\$33.99 1.75L
Chivas Regal 18Yrs.....	\$49.99
Johnnie Walker Red...\$13.99 750ml	\$26.99 1.75L
Johnnie Walker Gold.....	\$44.99
Johnnie Walker Green.....	\$34.99

## Tequila Specials

Jose Cuervo Traditional.....	\$16.99
Jose Cuervo Reserva de la Familia.....	\$84.99
Jose Cuervo Especial.....	\$20.99 1.75L
Don Julio 1942.....	\$84.99
Don Julio Blanco.....	\$24.99
Patron Añejo.....	\$33.99
Patron Silver.....	\$33.99
Patron Platinum.....	\$179.99
1800 Tequila Reposado/Silver.....	\$17.99
El Jimador Reposado/Silver.....	\$15.99

<b>Don Julio</b> Añejo Tequila <b>32<sup>99</sup></b> 	<b>Cristall</b> Vodka <b>9<sup>99</sup></b> 	<b>Gantous &amp; Abou Raad</b> Arak <b>12<sup>99</sup></b> 	<b>Belvedere</b> Vodka <b>20<sup>99</sup></b> 	<b>Arrow Liqueur</b> Assorted Flavors <b>2 for 5<sup>00</sup></b> 
<b>Johnnie Walker</b> Green Label <b>34<sup>99</sup></b> Gold Label <b>44<sup>99</sup></b>  	<b>Level</b> Vodka <b>17<sup>99</sup></b> 	<b>Louis XI XO</b> Brandy <b>14<sup>99</sup></b> 	<b>Don Julio</b> 1942 Tequila <b>84<sup>99</sup></b> 	<b>Johnnie Walker</b> Blue Label <b>124<sup>99</sup></b> 750ml <b>249<sup>99</sup></b> 1.75L 
<b>Imperia</b> Vodka <b>17<sup>99</sup></b> 	<b>Cazadores</b> Reposado Tequila <b>21<sup>99</sup></b> 	<b>Russian Standard</b> Vodka <b>11<sup>99</sup></b> 	<b>Dewar's</b> 12-Yr Scotch <b>17<sup>99</sup></b> 	<b>Wines</b> Select & Assorted 750ml Starting at <b>1<sup>89</sup></b> 

1785 E. Washington Blvd., Pasadena, CA 91104  
(626) 794-7026 • (626) 794-7368

Near the corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm  
www.missionliquor.com

\*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 03/29/08 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded  
• Prices subject to change without notice • No checks or credit cards  
All items are 750ml in size unless specified